ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1730: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ՇԱԲԱԹ, 4 ՓԵՏՐՎԱՐԻ 2017Թ.
№ 4 (422)

www.syuniacyerkir.am

Սյունյաց հողը անարատ է,
Չարի սերմը բուն չի դնի, անարմատ է,
Մարդն արծիվ է, լեռնածին է, հրահատ է,
Հազար հողմեր ձեզ չեն մաշել, Սյունյաց սարեր:

ԳՈՒՍԱՆ ԱՇՈՏ



ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ԱՐԹՈՒՐ ՄԻՐՋԱՅԱՆԻ

«Ապրել այնպես, որ հայրենի հողը երբեք չզգա քո ծանրությունը».

սա Սպարտակ Հակոբյանի սկզբունք-նշանաբանն է

Խոսք ճանապարհի

Այս մոլորակում ամեն մարդ իր մտածելակերպն ունի երեւույթների, իրադարձությունների նկատմամբ: Եվ այդ մտածելակերպը մարդու գենի արտահայտություն է դառնում, մարդու տեսակի դրսեւորում եւ հայտարար:

Եվ մտածելակերպն այդ դառնում է մարդու անցնելիք ճանապարհի ուղեցույց-կողմնացույցը: Եվ Սպարտակ Հակոբյան մարդու համար այդ մտածելակերպը ձեւավորվել է վաղուց, եւ «պրոցեսն» այդ սկսվել է մանկության տարիներից, երբ նա զբաղվում էր ինքնադաստիարակմամբ եւ ինքնակրթությամբ: Դա էլ իր պատճառն ուներ: Նրանց ընտանիքը ծանրաբեռ էր: Վեց եղբայր ու երեք քույր: Ասել է թե՝ մեծ ընտանիք: Սպարտակը տան փոքրն էր: Թվում էր, թե ամենաանհոգ, երես տված երեխան պիտի լիներ, սակայն... Հայրը շուտ կյանքից հեռացավ, տարիներ անց նաեւ մայրը... Արդեն կանխորոշված էր. Սպարտակը պիտի գյուղում մնար: Երեւանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտը եւ ասպիրանտուրան ավարտեց, գյուղ վերադարձավ: Սկզբում աշխատեց գյուղխորհրդում՝ հաշվապահ, հետո կոլտնտեսությունում՝ գլխավոր զոոտեխնիկ, կուսակցական կազմակերպության քարտուղար...

....Արցախը պոռթկաց, ոտքի ելավ: Ադրբեջանցին վայրագությամբ պատասխանեց արցախցու ազնիվ պոռթկմանը: Իսկ Կորնիձորն Արցախի թիկունքում է, այնքան մոտ, որ գյուղի սպիտակափրփուր լավաշի բույրն Արցախ էր հասնում, արցախցին գիտեր, թե այդ օրը կորնիձորցին ինչ է ուտում-խմում: Նույնն էլ կորնիձորցին...

Գյուղի խաղաղ արշալույսները ռմբակոծությամբ էին ազերիները լցնում: Հարկավոր էր ազերուն զսպաշապիկ հագցնել: Եվ Սպարտակ Հակոբյանը նույնպես խրամատներում էր: Կորնիձորը հաճախ էր հրետակոծվում: Գյուղում ավերածություններ, վիրավորներ, զոհեր եղան: Թշնամու արկը չխնայեց սիրելի կնոջը՝ իր Սյուզիի մորը... Սյուզին փոքր էր: Սպարտակն ամուսնացավ, տեղափոխվեց Գորիս: Հացի ընդունման ձեռնարկության տնօրենն էր: Այն ժամանակ ձեռնարկությունը գտնվում էր Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում: Երբ եկեղեցին վերաօծվեց ու դարձավ գործող, ձեռնարկության շենքը քանդեցին: Իսկ ձեռնարկությունն անհրաժեշտ էր Գորիսին ու տարածաշրջանի գյուղերին:

> *1997 թ. հիմնեց «Հայկ-Ժոս» ՍՊ ընկերությունը՝ ընկերոջ՝ Ժորա Ալեքսանյանի հետ: Ցորեն արտադրող գյուղացին այլեւս հոգս չուներ:*

Նա արդեն կարող էր հանգիստ հոգով հաց արարել: Եվ Սպարտակ Հակոբյան մարդը հոգով ու էությամբ դարձավ հաց արարող մարդու հենարանը:

Երբ ցորենով լի մեքենաները կանգնում են ձեռնարկության բակում, Սպարտակ Հակոբյանի հոգին ուրախությամբ ծառս է լինում. ուրեմն գյուղացին կարողացել է բերք աճեցնել, իսկ դա նշանակում է, որ նա կհոգա իր հոգսերը, երեխան դպրոց կգնա, գյուղացին չի կուչուռի հոգսերի տակ...

Սպարտակ Հակոբյանը նաեւ ցորենի արտադրությամբ է զբաղվում. այսօր 700 հա վար ու ցանք է անում, արտ հնձում:

– *Գործին անքերի տիրապետում եմ, գիտեմ՝ որ հո-*

էջ 2

ՍՅՈՒՆՅԱՑ

Ծնվել է 1957թ. փետրվարի 1-ին Գորիսի շրջանի Կորնիձոր գյուղում եւ բազմաշունչ ընտանիքի կրտսեր զավակն է: 1973-74թթ. գերազանցությամբ ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: Դպրոցն ավարտելուց հետո մինչեւ 1976թ. աշխատել է գյուղխորհրդում՝ հաշվապահ: 1976թ. զորակոչվել է խորհրդային բանակ: 1978-1980թթ. սովորել է Գորիսի գյուղատնտեսական տեխնիկումի անասնաբուծական բաժնում: 1986թթ. հեռակա ուսուցմամբ գերազանցությամբ ավարտել է Երեւանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտի անասնաբուծահնժեներական ֆակուլտետը: 1983-89թթ. եղել է Կորնիձորի Կիրովի անվան կոլտնտեսության գլխավոր զոոտեխնիկ, միեւնույն ժամանակ նաեւ գյուղի կուսակազմակերպության քարտուղար: 1991-93թթ. եղել է Գորիսի շրջանի գլխավոր անասնաբույծը, 1993-97թթ.՝ Գորիսի հացընդունման ձեռնարկության տնօրեն: 1997 թվականից ձեռնարկությունը սեփականաշնորհվել եւ վերակազմավորվել է «Հայկ-Ժոս» ՍՊ ընկերության, որի համասեփականատերն է ու գործադիր տնօրենը: Արցախյան շարժման սկզբից մինչեւ 1992թ. մասնակցել է Կորնիձորի ինքնապաշտպանությանը: ՀՀ անկախության 25-ամյակի առթիվ հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով արժանացել է «Երախտագիտության» մեդալի: Ամուսնացած է, ունի մեկ դուստր եւ երկու ուստր, երեք թոռ:

Խոսք ճանապարհի

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ԱՐԹՈՒՐ ՍԻՐՈՅԱՆԻ

Կորնիձորի միջնակարգ դպրոցը

«Ապրել այնպես, որ հայրենի հողը երբեք չզգա քո ծանրությունը». սա Սպարտակ Հակոբյանի սկզբունք-նշանաբանն է

էջ 1

ղատարածքում ինչպիսի ագրոտեխնիկական միջոցառումներ են պետք, եւ երբ դրանք պետք է կիրառել: Իսկ դրա հիմքն այն է, որ երկար տարիներ ուսումնասիրել եմ տարբեր տարածքների բնակլիմայական պայմանները: Եվ գործի մեջ դնելով աշխատանքային իմ փորձը, գյուղատնտեսական գիտելիքներս, կարողանում եմ միշտ էլ բարձր բերք ստանալ: Եվ փառք Աստծո, երբեք հողն ինձ հուսախաբ չի արել, միշտ էլ բերքահավաքի արդյունքներից գոհ եմ եղել:

Գյուղատնտեսությամբ զբաղվելն ինձ համար հոբի է: Ես չեմ կարող ձեռքերս ծալած նստել: Պետք է աշխատեմ, բարիք ստանամ: Բարիք արարելու այբուբենը սովորեցնում եմ շատերին: Ինչքան շատ լինեն հաց արտադրողները, այնքան երկիրը հարուստ կլինի, կփոքրանա երկրի կախվածությունն ուրիշ պետություններից: Իսկ ցորենը միշտ էլ աշխարհի հիմքն է, չէ՞ որ ցորենն է նաեւ քաղաքականություն թելադրում: Ի դեպ, քաղաքականությամբ չեմ զբաղվել եւ չեմ էլ զբաղվի: Հայրենասիրությունը քաղաքականությամբ զբաղվելու մեջ չէ, հայրենասիրությունն ինձ համար այլ որակներ ունի, ինձ համար հայրենասիրությունը գյուղատնտեսությամբ զբաղվելն է: Ձայլամի քաղաքականություն երբեք չեմ վարել: Ուղիղ, շիտակ եմ նայում ամեն ինչին: Քննադատությունն ընդունում եմ, եթե այն առողջ է: Ասում են՝ ճշմարտությունը միշտ դառն է լինում: Բայց այն կարող է քեզ օգնել ճակատամարտի ժամանակ: Ճակատամարտը միայն ռազմի դաշտում չի մղվում, այն մղվում է ամենուր՝ տարբեր ուղղվածությամբ եւ իմաստով, տարբեր հարթություններում: Իսկ մարտն այնպես պետք է մղես, որ եւ դու շահես, եւ հասարակությունը: Միակողմանի երջանկություն, ուրախություն չի լինում: Երբ հարեւանդ սոված է, դու ո՞նց կարող ես հանգիստ վայելել քո ունեցվածքը: Միայն խոսելով երկիր չես պահի, բանակ չես կարող պահել: Պետք է տնտեսությունը զարգացնել. իսկ այդ ֆոնին բոլորն աշխատատեղ կունենան, նորմալ ընտանիք կպահեն: Եվ ամեն ինչ անում եմ, որ մեր ձեռնարկության ռիթմը չխախտվի: Ես դա չեմ անում իմ անձնական շահի համար, ես դարձյալ գյուղացու մասին եմ մտածում, այստեղ աշխատող մարդկանց մասին: Չէ՞ որ նրանց զավակներն են այսօր պահում Հայաստան աշխարհը:

Եվ Սպարտակ Հակոբյան մարդը, որ ապրում է իր սեփական, հալալ քրտինքով, մարդու հոգու հարստության մասին իր փիլիսոփայությունն ունի:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ԱՐԹՈՒՐ ՍԻՐՈՅԱՆԻ

Կորնիձորի հրապարակը

– Եթե մարդու հոգին հարուստ եղավ, նա գլուխը բարձին հանգիստ կդնի, հանգիստ կքնի: Ու նրա զավակները ժամանակի հոլովույթում առանց երերալու առաջ կգնան՝ որպես հենարան ունենալով ծնողների արած-դրածը Հայաստան աշխարհի համար: Ամենամեծ հանձնաժողովը, ամենաարդար դատավորը ժողովուրդն է: Նրա տված գնահատականն աքսիոմ է:

Եվ Սպարտակ Հակոբյանի մասին որպես մարդ դրվատանքով-հիացմունքով են արտահայտվում նրան ճանաչողները: Դա նաեւ նրա հայրենի Կորնիձոր գյուղում: Թեեւ Սպարտակն ապրում է Գորիսում, սակայն նա մտքերով, հոգով միշտ Կորնիձորում է, իր մանկության, պատանեկության օրրանում, իր սիրո օրրանում: Թե կորնիձորցու ընտանիքում ինչ-որ բան այնպես չէ, նա հոգով զգում է եւ չի սպասում, որ դիմեն իրեն: Անմիջապես շտապում է գյուղ: Իսկ եթե Սպարտակը, կամ, ինչպես կորնիձորցիներն են նրան սիրով անվանում՝ Պատոն, գյուղում է, ուրեմն, ամեն ինչ լավ է լինելու, լավը հաղթելու է: Նրա մուտքը գյուղ ուրախություն է առաջացնում, նրան միշտ սպասում են: Հանձին Սպարտակի, կորնիձորցին իր թիկունքում տաք շունչ է զգում, ուսին՝ մտերմիկ ու հարազատ մարդու ձեռքի հպում: Եվ գյուղում նրա նախաձեռնությամբ, աջակցությամբ նաեւ սոցիալական շատ հարցեր են լուծում ստացել:

Անձնական բարձր որակների շնորհիվ Սպարտակը կարողացել է գյուղում ստեղծել առողջ մտածելակերպ, հանդուրժողականություն, կամեցողություն: Երբ սկսվեց 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմը, Կորնիձորից բազմաթիվ կամավորներ մեկնեցին ռազմի դաշտ: Եվ օրինաչափ է դա. կորնիձորցին լավ գիտի խաղաղության գինը, նա պատերազմ է տեսել: Իսկ Սպարտակ Հակոբյանն այդ օրերին նյութապես օգնեց բանակին՝ ցուցաբերելով 5 միլիոն

էջ 12

Սպարտակ Հակոբյանը 60 տարեկան է

ԱՐԹՈՒՐ ԱՂԱԲԵԿՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փոխվարչապետ, գեներալ-լեյտենանտ

Սպարտակ Հակոբյանի հետ ծանոթանալու բախտ վիճակվեց դեռեւս 1995թ., երբ նա շրջում էր ազատագրված տարածքներում՝ ուսումնասիրելու տեղի թե՛ հողային, թե՛ տեխնիկական ռեսուրսները: Շատ ուրախ եմ, որ կյանքում ընկերներ եմ ձեռք բերել ոչ միայն անձնական հետաքրքրություններով, այլեւ Արցախի զարգացման ընդհանուր շահով պայմանավորված: Իսկ ինձ եւ Սպարտակ Հակոբյանին միավորել են նախեւառաջ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը, նրա տնտեսության զարգացմանը միտված քայլերը:

Հետագայում երբ Սյունիքի տարածաշրջանում զորահրամանատար էի, մեր հանդիպումները, որոնց առանցքն Արցախյան հիմնախնդիրն էր, առավել հաճախակի դարձան: «Պատերազմը՝ պատերազմ, բայց անհրաժեշտ է զարգացնել Լեռնային Ղարաբաղի տնտեսությունը», – ահա այն կարգախոսը, որով առաջնորդվելով երկու տասնյակ տարուց ավելի մեր ընկերությունը շարունակվում է: Այդ առումով կարող եմ արձանագրել, որ երջանիկ մարդ եմ, քանի որ մեր երկրի ղեկավարության, ժողովրդի հոգսը կիսող ընկերներով ու հարազատներով եմ շրջապատված: Մարդիկ, ովքեր հիմնախնդրին ծանոթանալուց անմիջապես հետո, առանց դրա լուծումը տեւական քննարկման առարկա դարձնելու, աջակցում են մեզ: Երբ կազմեցինք ազատագրված տարածքների վերաբնակեցման ծրագիր, միանշանակ գիտակցում էինք, որ միայն պետական ռեսուրսներով հնարավոր չէ այդ հարցին արդյունավետ լուծում տալ:

Սպարտակ Հակոբյանն այն անձանցից է, ով պատերազմի ավարտից հետո իր հնարավորությունների սահմաններում նպաստում է հատկապես այդ տարածքների տնտեսության զարգացմանը. Քաշաթաղի շրջանի հարյուրավոր ընտանիքների բարօրությունն այսօր ուղղակիորեն կապված է նրա գործունեության հետ:

Սպարտակ Հակոբյան անհատին բնութագրելիս կասեմ հետեւյալը. մարդ, ով ոչ միայն ապրում է իր ընտանիքի, բարեկամների ու հարազատների, այլեւ բոլոր նրանց համար, ովքեր այդ պահին նրա աջակցության կարիքն ունեն:

Տարիների հեռվից նայելով, մեր գործունեության միջեւ զուգահեռներ անցկացնելով՝ դժվարանում եմ ասել՝ ի՞նքն է ինձնից սովորել, թե՞ ես՝ իրենից: Ինչեւէ, ամենակարեւորն այն է, որ իմ մանկության, մարտական, կուսակցական, գաղափարական ընկերների շրջապատում հպարտությամբ ներկայացնում եմ Սպարտակ Հակոբյանին՝ որպես լավագույն ընկեր:

Սիրելի՛ ընկեր, հոբելյանի առթիվ մաղթում եմ, որ նախ նման ամյակներ շատ տոնես: Թող հասնես այն հանգրվանին, որ, ինչպես քո զավակներն են հպարտանում քեզնով, այնպես էլ դու հպարտանաս զավակներիդ ընտանիքներով ու հաջողություններով: Ցանկանում եմ՝ Աստված քեզ այնքան ուժ, եռանդ տա, որ երկար տարիներ մնաս Սպարտակ Հակոբյան թե՛ ընտանիքի, թե՛ ընկերների, թե՛ համագյուղացիների, թե՛ վերաբնակիչների եւ թե՛ մեր երկրի համար: ■

ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ

Գորիս համայնքի ղեկավար

Սպարտակ Հակոբյանին ճանաչում եմ վաղուց, ոչ վաղ անցյալից նաեւ ընկերություն ենք անում: Պարոն Հակոբյանն այն քիչ մարդկանցից է, որոնց կյանքն ու գործունեությունը բոլորինն է, որոնք Աստծո տված ամեն օրն ապրում են ոչ միայն իրենց եւ ընտանիքի համար, այլեւ ունեցած նյութականն ու հոգեւորը շռայլորեն բաշխում են շրջապատին՝ հույս ու հավատ տալով ամենքին: Նրա կենսագրականում աշխատանք ու արարում է՝ բազում բարիքներ, ամուր, հրաշալի ընտանիք: Նա հոգատար եղբայր ու նվիրված ընկեր է, հայրենասեր քաղաքացի եւ օրինակելի ղեկավար:

Միշտ մարդաշատ է Սպարտակ Հակոբյանի աշխատասենյակը, նա կանգնած է իր կարիքն ունեցող մարդկանց կողքին՝ աջակցելով թե՛ նյութապես, թե՛ խորհուրդներով: Իր հայրենի Կորնիձոր գյուղի հանրային, մասնավոր յուրաքանչյուր միջոցառման մասնակիցն ու աջակիցն է: Նա Գորիս համայնքի կյանքում եւս ունի իր ծանրակշիռ ներկայությունը:

Օգտվելով առիթից՝ ուզում եմ իմ ընկերոջն ու լավ բարեկամին շնորհավորել հոբելյանի կապակցությամբ, մաղթել առողջ ու երջանիկ կյանք, որդուն եւ ծառայակից ընկերներին՝ խաղաղ ու անփորձանք ծառայություն, ընտանիքին եւ շրջապատող մարդկանց՝ Սպարտակ Հակոբյան հիանալի մարդու երկարատեւ ներկայությունն իրենց կյանքում եւ առօրյայում:

Ծնունդդ շնորհավոր, բարի՛ մարդ: ■

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ Ա. ԱՎԱԳՅԱՆԻ

Հայոց ազգային բանակը 25 տարեկան է

Հունվարի 28-ի ձյունառատ օրը հայոց բանակի կազմավորման 25-ամյակին նվիրված միջոցառումների շարքը մարզկենտրոն Կապանում մեկնարկեց N զորամասից, որտեղ կայացավ հանդիսավոր փողոց: Միջոցառմանը մասնակցում էին մարզային եւ քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ, Արցախյան պատերազմի կապանցի ազատամարտիկներ, պատանի երկրապահներ: Բանակի օրվա առթիվ ներկաներին շնորհավորեց զորամասի հրամանատար, գնդապետ Կարեն Միրզոյանը, պահպանիչ խոսք ասաց Կապանի հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Հեբոյանը, տեղի ունեցավ պարգեւատրման արարողություն:

Իսկ Կապանի Գ.Նժդեհի անվան հրապարակում տեղի ունեցավ զինվորական հանրահավաք: Փողային նվագախումբը տոնական մեղեդիներ էր հնչեցնում, հրապարակում ցուցադրված էին ռազմական տեխնիկայի նմուշներ, որոնցով հետաքրքրված էին հատկապես դեռահասները: Բանակի օրվա առթիվ բանակային առաջին կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Տիգրան Փարվանյանի ուղերձը հրապարակեց կորպուսի հրամանատարի անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ, գնդապետ Արթուր Թումանյանը: Ազգային բանակի կազմավորման 25-ամյակի կապակցությամբ հայրենիքի պաշտպանության գործում մատուցած նշանակալի ծառայությունների համար N54122 զորամասի գումարտակի հրամանատար, փոխգնդապետ Զոհրապ Հունոյանը պարգեւատրվեց «Մարտական ծառայության» մեդալով, իսկ զորամասի գաղտնի մասի պետ, ավագ ենթասպա Շուշիկ Պետրոսյանը «Անդրանիկ Օզանյան» մեդալով: Հրապարակով հանդիսավոր քայլքով անցան զորամասի սպաներն ու զինվորները: Այնուհետեւ հանդիսության մասնակիցների մի խումբ այցելեց Բաղաբուրջի հուշահամալիր, որտեղ հարգանքի տուրք մատուցվեց Արցախյան գոյամարտի եւ ապրիլյան պատերազմի զոհերի հիշատակին:

Կեսօրից հետո Կապանի մշակույթի կենտրոնում անցկացվեց հանդիսավոր նիստ, օրվա խորհրդի առթիվ ներկաներին բարեմաղթանքի խոսքեր հղեց Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը, ով շնորհակալագրեր ու նվերներ հանձնեց մի խումբ զինվորականների, մարզպետ Վահե Հակոբյանի՝ բանակի օրվա առթիվ շնորհավորական ուղերձը հրապարակեց Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռուդոլֆ Սարգսյանը: Տոնի առթիվ շնորհակալական խոսքով հանդես եկան N զորամասի 1-ին գումարտակի հրամանատարի տեղակալ, մայոր Մասիս Բագրատյանը, Կապանի հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Հեբոյանը: Հանդիսավոր մասի ավարտից հետո տրվեց տոնական համերգ:

Այդ օրը Սիսական գնդում եւս տոնական տրամադրությունն էր իշխում: Բանակի օրվան նվիրված հանրահավաքում ելույթ ունեցան եւ ներկաներին բարեմաղթանքի խոսքեր հնչեցրին փոխգնդապետ Աշոտ Եղիազարյանը, Սիսիանի հոգեւոր հովիվ տեր Պարգեւ քահանա Զեյնալյանը եւ համայնքապետ Արթուր Սարգսյանը, ով մի շարք սպաների ու զինվորականների արժեքավոր նվերներ հանձնեց: Իսկ մի շարք զինվորականներ արժանացան ՀՀ պաշտպանության նախարարի, ՀՀ ԶՈՒ չորրորդ բանակային կորպուսի հրամանատարի, Սիսիանի գնդի հրամանատարի կրծքանշանների, պատվոգրերի, շնորհակալագրերի:

Հայոց բանակի կազմավորման 25-ամյակին նվիրված միջոցառումը կազմակերպվել էր Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի մշակույթի կենտրոնի դահլիճում: Ներկաներին ողջույնի խոսք ասաց Մեղրի համայնքի ղեկավար Մխիթար Զաքարյանը, հայոց բանակի N զորամասի հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Թելման Մաթեւոսյանը, Մեղրու զինվորական կոմիսար, մայոր Դավիթ Անանյանը, ներկաներին իր օրհնանքի խոսքերը հղեց Մեղրու տարածաշրջանի հոգեւոր հովիվ տեր Ռաֆայել քահանա Խաչիկյանը: Տոնական համերգը նախաձեռնել էր Մեղրու մարզամշակութային կենտրոնը:

Չնայած առատ ձյանն ու եղանակային անբարենպաստ տեղումներին՝ Քաջարան քաղաքում մեծ շուքով, պատշաճ մակարդակով տոնվեց Բանակի օրը:

Նշենք, որ հայոց բանակի կազմավորման 25-րդ տարեդարձի կապակցությամբ մարզպետ Վահե Հակոբյանի կողմից նվերներ ստացան պաշտպանության բանակի մի շարք զորամասեր:

Հայոց ազգային բանակի կազմավորման 25-ամյակի շրջանակներում հունվարի 27-ին Կապանի մշակույթի կենտրոնի «Պարի աստղերի» ստուդիայի պարասենյակը կոչվեց ապրիլյան պատերազմի նահատակ, ստուդիայի նախկին անդամ եւ կրտսեր պարուսույց Նորայր Գասպարյանի անվամբ: Բացի այդ նրա անվամբ պարասենյակում ստեղծվեց անկյուն: Իսկ մշակույթի կենտրոնում «Պարի ստուդիայի» ծննդյան 23-րդ տարեդարձին նվիրված միջոցառումը եւս նվիրված էր Նորայր Գասպարյանի հիշատակին, ստուդիայի տարբեր տարիքային խմբերի սաները հանդես եկան պարային կատարումներով, որոնց թեմատիկան հիմնականում բանակն էր: Հայտարարվեց, որ Կապանի մշակույթի կենտրոնը սահմանել է Նորայր Գասպարյանի անվամբ մրցանակ՝ տարվա լավագույն պարողների համար:

Հայոց բանակի կազմավորման 25-ամյակի առթիվ ծրագրված ոչ բոլոր միջոցառումները հնարավոր եղավ Գորիսում անցկացնել՝ եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով: Բայց եւ այնպես, օրը տոնական էր, գորիսեցիների տրամադրությունը՝ բարձր: Հունվարի 28-ին Գորիսի բոլոր օջախներում բաժակ բարձրացվեց հայոց տան պաշտպանների կենացը, նրանց մաղթեցին առողջություն, անառիկություն: 2016թ. տարվա մարդ կոչումը գորիսեցիները շնորհեցին հայոց զինվորին ու սպային, որ ամուր զսպաշապիկ են ազերիների համար:

Իսկ առավոտյան Գորիսի համայնքապետարանի աշխատակիցները համայնքապետ Վաչագան Ադունցի ղեկավարությամբ, ինչպես նաեւ Գորիսի երկրապահները, եղան Հայրենական մեծ պատերազմի եւ Արցախյան պատերազմի հերոսներին նվիրված հուշահամալիրում, իրենց խոնարհումը զոհերին հայտնեցին ծաղիկներ դնելով: Այնուհետեւ նրանք գնացին Գորիսում տեղակայված N զորամաս: Գ.Աշոտի անունը կրող համույթի երգիչ-երգչուհիները զինվորների տոնական օրվան եւս մի շտրիխ ավելացրին՝ իրենց կատարումներով:

Գորիսի համայնքապետարանը հեռուստացույց նվիրեց զորամասին:

Վ.Վաղարշյանի անվան Գորիսի պետական դրամատիկական թատրոնի կոլեկտիվը տոնական օրվա կապակցությամբ ներկայացրեց Ա.Երնջակյանի «Ի զեն» պիեսը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Ո՞ր կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) կմասնակցեն ԱԺ ընտրություններին

Գործող Ընտրական օրենսգիրքը Հայաստանի Հանրապետության ԱԺ պատգամավորի թեկնածուներ առաջադրելու իրավունքը վերապահում է կուսակցություններին եւ կուսակցությունների դաշինքներին:

Կուսակցությունների դաշինքները կարող են կազմավորվել առնվազն երկու կուսակցության կողմից: Կուսակցությունը կարող է ընդգրկվել միայն մեկ դաշինքի կազմում:

Նախընտրական այս օրերին թիվ 1 քաղաքական հարցը, առանց չափազանցության, կուսակցությունների դաշինքների ձեւավորումն է: Ասել է թե՝ ո՞ր կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) կմասնակցեն ապրիլի 2-ի ընտրություններին:

Արդեն իսկ հայտնի է, որ ձեւավորվել է «Ելք» դաշինքը՝ մասնակցությամբ «Լուսավոր Հայաստան», «Քաղաքացիական պայմանագիր», «Հանրապետություն» կուսակցությունների:

Հայտնի է նաեւ, որ առաջիկա խորհրդարանական ընտրություններին միեւնույն դաշինքով են մասնակցելու «Համախմբում», «Երրորդ հանրապետություն» եւ Հայաստանի դեմոկրատական կուսակցությունները:

ԱԺ ընտրություններին համատեղ մասնակցելու հուշագիր կստորագրեն «Ծառուկյան դաշինք»-ին միացող քաղաքական ուժերի ղեկավարները: Դաշինքին, ըստ մայրաքաղաքային մամուլի կանխատեսումների, կմիանան Սոցիալ-դեմոկրատ հնչակյան, Հայաստանի ռամկավար ազատական, Հայոց համազգային շարժում, Բարգավաճ Հայաստան կուսակցությունները, «Միասնություն» շարժումը…

Առաջիկա օրերին ականատես կլինենք նոր դաշինքների ձեւավորմանը (կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները գրանցման համար փաստաթղթերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով կներկայացնեն փետրվարի 6-16-ը՝ մինչեւ 18:00):

Մի քանի կուսակցություն էլ ընտրություններին կմասնակցի միայնակ (առանց դաշինքների), թեեւ բոլորն էլ (դատելով նրանց հայտարարություններից) բաց են եւ պատրաստ են համագործակցել քաղաքական ուժերի եւ միավորումների, հասարակական կառույցների եւ անհատների հետ, ովքեր կիսում են տվյալ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) մտահոգություններն ու տեսակետները:

Կարող են լինել նաեւ քողարկված դաշինքներ: Ընտրական օրենսգիրքը հնարավորություն է ընձեռում կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) համապետական ընտրական ցուցակի առաջին մասում ընդգրկել նաեւ այդ կուսակցության (դաշինքի անդամ կուսակցություններից որեւէ մեկի) անդամ չհանդիսացող անձանց, որոնց թիվը չի կարող գերազանցել համապետական ընտրական ցուցակի առաջին մասում ընդգրկված թեկնածուների ընդհանուր թվի 30 տոկոսը:

Այդուհանդերձ՝ այսօր արդեն ակնհայտ են դաշինքների ձեւավորմանը բնորոշ որոշ միտումներ եւ սկզբունքներ:

Առաջին ուշագրավ հանգամանքը, որ ողջունելի է, քաղաքական միավորումների կրճատումն է կամ խոշորացումը: Իրոք որ, կուսակցապետության ճանապարհ բռնած Հայաստանի անթիվ-անհամար կուսակցությունների շարքում (մոտ 70 միավոր) դասական ասված կուսակցությունների թիվը 2-3-ից չի անցնում: Որոշ կուսակցություններ էլ պարզապես շփոթված երեւույթ են, ակնհայտ թյուրիմացություն:

Քիչ չեն մարդիկ, որքան էլ տարօրինակ է, որ միանգամից անդամագրվում են մի քանի կուսակցության: Պատահական չէ, որ նախընտրական այս օրերին կուսակցությունները միմյանց հաշվին «համալրում» են իրենց շարքերը՝ մոռանալով, որ ավելի ծիծաղելի ու ողորմելի են դառնում:

Զարմանալի չէ նաեւ, որ այս կամ այն կուսակցության երեկվա դրոշակակիրը դառնում է տվյալ կուսակցության կատաղի քննադատ (դա բնորոշ է ոչ միայն նոմենկլատուրային աշխատողների հավաքածու կուսակցություններին):

Կուսակցությունների դաշինքների ձեւավորումը չի կատարվում գաղափարական, ծրագրային նույնության, արյունակցության հենքի վրա, որը նույնպես ակնհայտ իրողություն է: Այդ երեւույթն էլ չպետք է արտառոց համարել, քանզի մեզանում լուրջ ծրագրերի, գաղափարախոսությունների երաշտը շարունակվում է:

Քաղաքական-գաղափարախոսական դաշտն արեւմտամետների ու ռուսամետների բաժանելը նույնպես կեղծ կատեգորիաների շարքից է. առաջնայինը, ըստ էության, պատեհապաշտությունն է, կոմֆորտը եւ կոնյունկտուրան:

Որոշ դաշինքներ էլ կլինեն պլուտոկրատիայի պարզագույն դրսեւորումներ:

Կուսակցությունների դաշինքների ձեւավորման գործընթացը ցույց է տալիս նաեւ, որ մեզանում գրեթե վերացել են իշխանական կուսակցություն, ընդդիմադիր կուսակցություն եզրույթները: Իշխանամետների գերակշիռ մասն իշխանամետ է բացառապես պաշտոնի բերումով եւ սեփական ունեցվածքի ու դիրքի անձեռնմխելիությունն ապահովելու մղումով: Ընդդիմադիրների գերակշիռ մասն էլ ընդդիմադիր է իբր չնկատված, չգնահատված լինելու եւ չարդարացված ակնկալիքների պատճառով:

Հայրենիքը, Հայաստանը, ազգային խնդիրները ոչ միշտ տեղ ունեն այդ ամենի մեջ: Այդ հասկացողությունների ընկալումներն էլ յուրովի են կուսակցությունների եւ նրանց դաշինքների մոտ:

Իբրեւ վերջաբան խոստովանենք՝ Ազգային ժողովում տեղ ունենալու համար արդեն իսկ մղվող պայքարում որոշիչ է լինելու հանգամանքը, թե որ կուսակցությունները եւ կուսակցությունների դաշինքներն են մասնակցում ընտրություններին: Ոչ պակաս կարեւոր է լինելու այն, թե ովքեր են գլխավորում այս կամ այն կուսակցության (կուսակցությունների դաշինքի) համապետական ցուցակը:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Աջակցություն ապրիլյան պատերազմում նահատակված սյունեցիների ընտանիքներին

Սյունիքի զարգացման եւ ներդրումների հիմնադրամը հունվարից աջակցություն է ցուցաբերում ապրիլյան պատերազմում նահատակված սյունեցիների ընտանիքներին:

– Մեր հերոսների սխրանքը երբեք չի մոռացվելու, – ապրիլյան պատերազմում զոհված 13 մարտիկների հարազատների հետ մարզպետարանում փետրվարի 1-ին կայացած հանդիպման ժամանակ ասաց Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը: Մարզի ղեկավարը նաեւ հայտնեց, որ վավերագրական ֆիլմ է նկարահանվում ապրիլյան պատերազմում ընկած սյունեցի մարտիկների մասին, որի շնորհանդեսը լինելու է մայրաքաղաքում: Նախատեսվում է ֆիլմի նկարահանումն ավարտել այն հաշվով, որ ապրիլի սկզբին պատրաստ լինի հանձնել հանդիսատեսի դատին: Մարզպետը յուրաքանչյուր զոհված ազատամարտիկի ընտանիքին հանձնեց «Ամերիա» բանկի քարտ, որով բանկից յուրաքանչյուր ամիս կստանան 150 հազարական դրամ:

Իրոք որ՝ ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել… Սյունիքի մարզպետի գնահատելի այդ նախաձեռնությունը դրա վկայությունն է:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Սյունիքի մարզի փնտեսվարողները 1000 խոշոր հարկատուների ցանկում

ՀՀ հարկային ծառայությունը հրապարակել է 2016թ. արդյունքներով առաջին 1000 խոշոր հարկ վճարողների ցանկը, որում տեղ են գտել նաեւ սյունիքյան 20 ընկերություն եւ կազմակերպություն. երկուերեք տարի առաջ այդ թիվն անցնում էր երեսունից:

Խոշոր հարկատուների ցանկում են Կապանի եւ Գորիսի բժշկական կենտրոնները. նրանցից յուրաքանչյուրը հաշվետու տարվա ընթացքում պետությանը վճարել է մոտ 120 մլն դրամ հարկ:

Խոշոր հարկատուի իրենց ավանդական դիրքը շարունակում են պահպանել «Մեղրու ՃՇՇՉ» ՍՊԸ-ն (335 մլն դրամ հարկ) եւ «Կապանի ՃՇՇ» ՍՊԸ-ն (125 մլն դրամ հարկ): Կան տնտեսվարողներ, ովքեր գրանցված են Սյունիքում, բայց չեն գործում մարզում. դա էլ նրանց՝ հայտնի սկզբունքով գործելու մասին է վկայում՝ աչքից հեռու՝ սրտից հեռու (Լիա Կ գրուպ, Ռոյալ փրինթ, Արմենիան մայնինգ քոնթրակթոր, Ալ խալիդիա տուրիզմ…):

Ուշագրավ է, որ խոշոր հարկ վճարողների ցուցակի չորրորդ հորիզոնականն զբաղեցնում է «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲ ընկերությունը, որը, իհարկե, «Քոնթուր գլոբալ հիդրոկասկադ» ընկերությունը չէ: Սա հենց «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ն է, որի ունեցվածքը վաճառվեց «Քոնթուր գլոբալ հիդրոկասկադ» ընկերությանը: «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ն 2016-ին գործունեություն չի իրականացրել, եւ կարելի է ենթադրել, որ հարկերն առաջացել են ընկերության գույքի առուվաճառքից ստացված եկամուտներից (վճարված հարկը՝ մոտ 15,5 մլրդ դրամ):

Խոշոր հարկ վճարողների շարքում, ինչպես բազմիցս ենք արտահայտվել, առավել հետաքրքիր է մարզի հանքարդյունաբերական երեք ձեռնարկության վիճակը:

«Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերությունը տարվա արդյունքներով զբաղեցրել է 16-րդ տեղը (2015-ի արդյունքներով՝ 2-րդ, 2014-ի արդյունքներով՝ 4-րդ, 2013-ի արդյունքներով՝ 1-ին տեղը):

«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲ ընկերությունը 2016-ի արդյունքներով զբաղեցրել է 38-րդ տեղը (2015-ի արդյունքներով՝ «Դանդի փրիշս մեթալս Կապան» ՓԲԸ-ն՝ 36-րդ, 2014-ի արդյունքներով՝ 16-րդ, 2013-ի արդյունքներով՝ 14-րդ տեղը):

«Ագարակի ՊՄԿ» ՓԲ ընկերությունը 2016-ի արդյունքներով զբաղեցրել է 89-րդ տեղը (2015-ի արդյունքներով՝ 44-րդ, 2014-ի արդյունքներով՝ 40-րդ, 2013-ի արդյունքներով՝ 34-րդ տեղը):

Խոշոր հարկատուների ցուցակում զբաղեցրած տեղը միգուցեեւ խորհրդանշական կամ բարոյական նշանակություն ունի: Մինչդեռ կարեւոր է, թե հանքարդյունաբերության երեք ձեռնարկությունից յուրաքանչյուրը որքան հարկ է վճարել 2016 թվականին:

«Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ն վճարել է մոտ 9,2 մլրդ դրամ (2015-ին՝ 27,5 մլրդ, 2014-ին՝ մոտ 20 մլրդ, 2013-ին՝ 37,8 մլրդ դրամ):

«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ն վճարել է մոտ 3,2 մլրդ դրամ (2015-ին՝ «Դանդի փրիշս մեթալ Կապան» ՓԲԸ-ն՝ 3,3 մլրդ դրամ, 2014-ին՝ 5,2 մլրդ դրամ, 2013-ին՝ 5,3 մլրդ դրամ):

«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն վճարել է մոտ 1,5 մլրդ դրամ (2015-ին՝ 2,9 մլրդ դրամ, 2014-ին՝ 3,2 մլրդ դրամ, 2013-ին՝ 3,5 մլրդ դրամ):

Հանքարդյունաբերական ձեռնարկություններում արձանագրված նահանջը պայմանավորված է նախեւառաջ միջազգային շուկայում՝ գունավոր մետաղների լոնդոնյան բորսայում գների անընդհատ նվազումով: Նոր-նոր (2016-ի վերջից) կայունացում է նկատվում մոլիբդենի շուկայում (մեկ տոննա մաքուր մոլիբդենի գինը ներկայումս 15250 դոլար է՝ 2014-ի 33000 դոլարի փոխարեն), ինչպես եւ պղնձի շուկայում (մեկ տոննա մաքուր պղնձի գինը ներկայումս 5931 դոլար է՝ 2013-ի 8216 դոլարի դիմաց): Ի դեպ, 2016-ի սկզբին պղնձի գինը հասել էր աննախադեպ ցածր նիշի՝ մեկ տոննան՝ 4310 դոլար:

Ստեղծված իրավիճակում, կարծում ենք, հանքարդյունաբերական ձեռնարկությունների գլխավոր խնդիրը շարունակում է մնալ առկա աշխատատեղերի պահպանումը եւ կենսական նշանակություն ունեցող սոցիալական ծրագրերի իրականացումը:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Անդրեյ Սինյակովը՝

Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավոր տնօրեն

2017թ. փետրվարի 3-ից «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունը կգլխավորի տեխնիկական գիտությունների թեկնածու Անդրեյ Անատոլեւիչ Սինյակովը:

Ծնվել է 1977թ. դեկտեմբերի 8-ին Ռուսաստանի Դաշնության Սախայի (Յակուտիայի) Հանրապետության Ներյունգրի քաղաքում: Մասնագիտությամբ լեռնային ճարտարագետ է: 1995-2000թթ. սովորել եւ ավարտել է Յակուտիայի պետական համալսարանի Ներյունգրիի մասնաճյուղը: Նույն համալսարանում այնուհետեւ (2003-2007թթ.) ստացել է ինֆորմատիկ-տնտեսագետի մասնագիտություն:

Աշխատանքային գործունեությունը սկսել է «Յակուտուգոլ» արտադրական միավորման «Ներյունգրիսկի» կտրվածքում՝ էքսկավատորավարի օգնական (2000-2001թթ.), իսկ 2001-2006թթ. զբաղեցրել է նույն մասնաճյուղի լեռնային աշխատանքների գծով առաջատար ճարտարագետի պաշտոնը, դարձել հարավյակուտակական տարածաշրջանի մրցույթի դափնեկիր՝ 2005թ. «Տարվա լավագույն գիտական նախագիծ» անվանակարգում:

2007-2010թթ. գլխավորել է «Յակուտուգոլ» ԲԲ ընկերության տեխնիկական քաղաքականության ծառայությունը: Այնուհետեւ՝ 2010-2011 թվականներին, նույն ընկերության տեխնիկական տնօրենի տեղակալն էր, ապա՝ լեռնային աշխատանքների հեռանկարային զարգացման, տեխնոլոգիական եւ պլանավորման վարչության պետը: 2011-2014թթ. արդեն գլխավոր ճարտարագետի տեղակալն էր եւ տեխնիկական վարչության պետը, որից հետո նշանակվել է «Տեխստրոյկոնտրակտ» ընկերության տնօրեն: 2014 թվականից մինչ նոր նշանակումն Անդրեյ Սինյակովը Սախայի Հանրապետության (Յակուտիայի) արդյունաբերության եւ երկրաբանության նախարարի տեղակալն էր: Բարձրագույն կրթություն ստանալուց հետո՝ 2000 թվականից, արտադրական գործունեությունը համատեղել է գիտական եւ դասախոսական գործունեության հետ: 2004-ից մինչեւ 2014 թվականը «Լեռնային գործ» ամբիոնի վարիչն էր: Ամուսնացած է, ունի երկու երեխա:

«Սյունյաց երկիր»-ը շնորհավորում է Անդրեյ Սինյակովին՝ նշանակման կապակցությամբ, մաղթում հաջողություններ Սյունիքի մարզի եւ հատկապես Մեղրու տարածաշրջանի համար մեծ նշանակություն ունեցող ձեռնարկության ղեկավարման գործում:

Սեփ.լրատվություն

Ամփոփվել են Սյունիքի մարզային փրկարարական ծառայության 2016թ. կատարած աշխատանքները

Հունվարի 25-ին Սյունիքի մարզպետարանի նիստերի դահլիճում տեղի է ունեցել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Սյունիքի մարզային փրկարարական վարչության տարեկան հաշվետու նիստը:

Նիստը վարում էր ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ Հ.Հակոբյանը: Ներկա էին Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռ.Սարգսյանը, ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի տեղակալ, փ/ծ գեներալ-մայոր Ն.Գրիգորյանը, մարզպետարանի աշխատակազմի, մարզի փրկարարական ծառայության ներկայացուցիչներ, համայնքների ղեկավարներ:

Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարար ծառայության փոխգնդապետ Բ.Զաքարյանը հաշվետվություն ներկայացրեց մարզի փրկարար ծառայության 2016թ. ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ: Նշվեց, որ հաշվետու տարում Սյունիքի մարզի տարածքում գրանցվել է 638 արտակարգ դեպք, որոնց հետեւանքով զոհվել է 30, մարմնական վնասվածքներ ստացել 142 մարդ, օգնություն է ցուցաբերվել 3440 քաղաքացու: 2016թ. արտակարգ իրավիճակների դեպքերը մարզի տարածքում նվազել են 119-ով, զոհերի թիվը պակասել է 6-ով, վիրավորների թիվը՝ 7-ով: Նշված դեպքերից՝ 528-ը տեխնածին է: Հրդեհների թիվը մարզում պակասել է 124-ով: Հաշվետու ժամանակահատվածում մարզի տարածքում գրանցվել է տարերային ԱԻ 85 դեպք: Տարվա ընթացքում բնակչության պաշտպանության համակարգի օպերատիվ նախապատրաստման ուղղությամբ պլանավորվել եւ անց են կացվել օբյեկտային վարժանքներ եւ դասախոսություններ, շտաբային ուսումնավարժություններ:

Կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ ներկայացրին նաեւ ՀՀ ԱԻՆ Սյունիքի մարզային փրկարարական վարչության ծառայությունների ղեկավարները:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռ.Սարգսյանը մարզպետ Վահե Հակոբյանի անունից շնորհակալություն հայտնեց Սյունիքի մարզային փրկարարական վարչության աշխատակիցներին՝ ծառայության համար եւ նշեց, որ մարզային փրկարարական վարչության ու մարզպետարանի միջեւ առկա սերտ համագործակցության արդյունքում տարվա ընթացքում շատ խնդիրներ են լուծում ստացել:

Նիստի ավարտին մարզի քաղաքային համայնքների ղեկավարները ՀՀ Սյունիքի մարզի փրկարար ծառայության մի խումբ աշխատակիցների հանձնել են շնորհակալագրեր ու հուշանվերներ:

25.01.2017
syunik.mtad.am

ՍԱՇԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ. «Սա մեր հայրենիքն է, մենք պիտի շենացնենք, յուրաքանչյուր խնդրի շուրջ խորհրդածենք...»

Ձմեռը հոգսին հոգս է ավելացնում: Այս պարզ ճշմարտության մեջ վերստին համոզվեցինք Սիսիանի տարածաշրջանի Դարբաս գյուղի համայնքապետարանում՝ գյուղական բնակավայրեր մեր հերթական աշխատանքային այցի ժամանակ:

Սաշա Ստեփանյան
Դարբասի համայնքապետ

Ձմռան այս ցրտին սառել էին ջրի ծորակները, խողովակները: Գյուղում երկու աղբյուր էր գործում (իսկ համայնքի մոտ 30 տոկոսը սեփական օգտագործման աղբյուր ունի): *«Այսօր, ինչպես նախորդ դարերում, կժով ջուր ենք կրում»,* – երեւույթը պատկերավոր ներկայացնում է համայնքապետ Սաշա Ստեփանյանը: Գյուղն այլ հիմնախնդիրներ եւս ունի, որոնց կանդրադառնանք ստորեւ, քանզի չէինք կարող չներկայացնել արմատները դեպի դարերի խորքը գնացող գյուղի անցյալի որոշ դրվագներ:

Դարբասը Սյունիքի հին բնակավայրերից է, եւ նրա մասին առաջին հիշատակությունը վերաբերում է 844 թվականին: Ըստ Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» աշխատության՝ գյուղն ընդգրկված էր Ծղուկ գավառի մեջ, Տաթեւի վանքին վճարում էր 10 միավոր հարկ, հինավուրց անունը՝ Ըղվերծ: Պատմական աղբյուրները վկայում են, որ Դարբասը 15-րդ դարում ունեցել է յոթ եկեղեցի եւ 700 ծուխ: Գյուղը հարուստ է պատմական հնություններով, այստեղ գտնվում են սուրբ Աստվածածին եկեղեցու ավերակները՝ կառուցված 17-րդ դարի երկրորդ կեսին, կան գերեզմանատուն, խաչքարեր՝ 14-15-րդ դարերի տապանագրերով եւ կամուրջ՝ շինված 1675 թվականին: Տեղացիներն այն կոչում են Արզումանի կամուրջ: Դարբասը նախկինում երբեմն ոչ միատարր բնակչություն է ունեցել, հայ-ադրբեջանական բախումների թատերաբեմ եղել, մանավանդ 1905 թվականին:

Նախկին անվանումներն են նաեւ Դարաբազ, Դարապաս, Դարբազ: Հայկական ԽՍՀ գերագույն խորհրդի նախագահության 1946-ի հրամանագրով Դարապասը վերանվանվել է Դարբաս:

1897 թվականին ուներ 971, 1926-ին՝ 662, 1939-ին՝ 879, 1959-ին՝ 873, 1970-ին՝ 965, 1979-ին՝ 806 հայ բնակիչ:

Գյուղը մարզկենտրոնից հեռու է 129, Սիսիան քաղաքից՝ 25 կիլոմետր, ծովի մակերեւույթից բարձրությունը՝ 1500 մետր:

Համայնքի վարչական տարածքի մեջ է մտնում նաեւ Շամբ գյուղը:

Համայնքի ղեկավար Սաշա Ստեփանյանը մարզի երիտասարդ համայնքապետերից է, խոսքի հարգն իմացող, համայնքի հիմնախնդիրներով մտահոգ: Ծնվել է 1981-ին: Շամբի միջնակարգն ավարտելուց հետո ընդունվել է Գորիսի «Տաթեւ» համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը. դեռ չավարտած՝ ծառայել ՀՀ զինված ուժերում, զորացրվելուց հետո ավարտել է համալսարանի Սիսիանի մասնաճյուղը, զբաղվել անհատ ձեռնարկատիրությամբ: 2008-16 թվականներին եղել է Դարբաս համայնքի ավագանու անդամ: 2012-ից աշխատել է «Հակոբջանյան եւ Գալստյան» ՍՊ ընկերությունում՝ «Որոտնա» փոքր հէկի հերթափոխի պետ, այնուհետեւ՝ ավագ օպերատոր:

2016-ի հուլիսի 10-ի արտահերթ ընտրություններում ընտրվել է Դարբաս համայնքի ղեկավար: Համայնքում ոմանք վերապահումով էին վերաբերվում նրա ընտրվելուն՝ մտածելով, որ անփորձ է, երիտասարդ է, բայց դեռեւս ավագանու անդամ եղած տարիներին փորձ էր ձեռք բերել, ուստի կարճ ժամանակամիջոցում հակառակն ապացուցեց՝ իր ունակություններով, գործին նվիրվածությամբ:

Ինչպես շատուշատ գյուղական համայնքներում, Դարբասում նույնպես հիմնախնդիրները լիուլի բավարարում են: *«Սա մեր հայրենիքն է, մենք պիտի շենացնենք, յուրաքանչյուր խնդրի շուրջ պիտի նստենք, խորհրդածենք, քննարկենք, ինչոր մի փոփոխություն անենք: Ամեն ինչ անուշադրության մատնելով, մատների արանքով նայելով՝ շատ բան անդառնալիորեն կկորցնենք, երկիրն ապագա չի ունենա»,* – ասում է Սաշա Ստեփանյանը:

Մեր զրույցը կայացավ համայնքապետարանի շենքում, որը եւս նորոգելու անհրաժեշտություն ունի:

էջ 8

Արզումանի կամուրջը

Դարբասի ձորը

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

Մեջքին էր ընկել Դարբասի ձորը,
Բացել էր բերանը իր ահագին,
Եվ ինձ թվում էր, թե նա ուր որ է
Կուլ կտա ելնող արեգակին:
Իսկ արեգակը միշտ խուսափում էր,
Նրան խաբում էր ու հեռանում,
Ձորը խռովում ու մրափում էր՝
Խեղդելով բախտս իր բերանում...
Ձորի լանջերը հիմա ծաղկում են,
Այգեստաններն են շրջում անվերջ,
Գիմա կանգնել է եւ աղմկում է
Լույսի կայանը այդ ձորի մեջ:
Անցյալը դառն էր, ծանր է հիշելը...
Ի՞նչ իմանայի, փոքր էի դեռ,
Որ այս խոր ձորից անգամ գիշերը
Արեւներ կելնեն լանջերն ի վեր:
Ինչ իմանայի ես այն մութ օրը,
Որ մի ասպետ իբրեւ փրկության հույս,
Դեռու հյուսիսից գալով այս ձորը,
Կբերեր հազար արեւի լույս:

1953թ.

Երբ ամեն անգամ բացվում է օրը,
Մտքով մտնում եմ Դարբասի ձորը...
Կարծես լսում եմ մորս օրորը,
Երբ սոսափում է ծանոթ բարդին:

Դեմս փռվում է իմ կանաչ Լորը,
Իմ փառավորը, իմ բախտավորը...
Գիշում եմ մորս մութ-կապույտ շորը,
Երբ փաթաթվում է մշուշն արդին:

Ամ, այնպես ջերմ է եւ այնպես խոր է,
Այն սերը, որով սիրում եմ Լորը,
Այդ սիրով միայն սիրում է մորը
Զգնիվ, անձնազոհ նրա որդին:

Ինչպե՞ս չսիրեմ ես այս բոլորը,
Երգիս մեջ թռչում, երգում է Լորը,
Անվերջ ծաղկում է, ժպտում է նորը
Այս հնամենի սարահարթին:

1953թ.

ԳԱԳԻԿ ԹՈՒՆՅԱՆ.
«Լեթարգիկ քուն մտած աշխատակիցները հնարավորինս շուտ պետք է արթնանան»

Հունվարի 30-ին Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության աշխատակազմին ներկայացրեց կենտրոնի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գագիկ Թունյանին: Կենտրոնի նախկին տնօրեն Սաշա Խաչատրյանն աշխատանքից ազատվել է սեփական դիմումի համաձայն: Պաշտոնակալության, առաջիկա ծրագրերի, ակնկալիքների մասին է զրույցը Գորիսի բժշկական կենտրոնի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, բժշկական գիտությունների թեկնածու, վիրաբույժ Գագիկ Թունյանի հետ:

– Պարո՛ն Թունյան, համառոտ ներկայացրեք Ձեր կենսագրությունը:

– Ծնվել եմ 1971թ. Գորիսում, գերազանցությամբ ավարտել Բակունցի անվան միջնակարգ դպրոցը, 1989թ. ընդունվել ՌԴ Ռժեւսկի պետական բժշկական ակադեմիա: Մինչ այդ մեկ տարի աշխատել եմ Գորիսի թիվ 1 շինտրեստում՝ բանվոր: Ասեմ՝ աշխատանքային գործունեությանս այդ ինը ամիսը շատ եմ կարեւորում, քանի որ այդ ընթացքում միայն հասկացա, որ եթե ուզում ես բժիշկ դառնալ, պետք է շատ կարդաս, այլապես ողջ կյանքի ընթացքում պետք է ցեխ անես: 1995թ. գերազանցությամբ ավարտել եմ բժշկական ակադեմիան, որից հետո որպես վիրաբույժ՝ նեղ որակավորմամբ, վերադարձել եմ հայրենի քաղաք, մեկ տարի աշխատել այն ժամանակ Յոլյանի անվան շրջանային հիվանդանոցում: Դրանից հետո կրկին մեկնել եմ ՌԴ, առկա ուսուցմամբ սովորել նույն ակադեմիայի ուռուցքաբանության ամբիոնի ասպիրանտուրայում: Միեւնույն ժամանակ 1998 թվականից այդ ամբիոնում աշխատել եմ ասիստենտ, դասախոս: 2000թ. պաշտպանել եմ թեկնածուական թեզ՝ «Ստամոքսի չարորակ ուռուցքների եւ դրանց վիրահատական բուժման արդյունավետության նոր մեթոդների ներդրում, կիրառում ու մշակում» թեմայով: 2001թ. կնոջս՝ մասնագիտությամբ բժիշկ-նեոնատոլոգ, եւ առաջնեկիս՝ Տիգրանի հետ վերադարձել եմ Գորիս ու աշխատանքի անցել Գորիսի հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքում՝ օրդինատոր: 2009 թվականից տեղափոխվել եմ մայրաքաղաք եւ անցել ռազմաբժշկական ծառայության ՊՆ կենտրոնական զինվորական կլինիկական հոսպիտալի վիրաբուժական բաժանմունքում՝ ավագ օրդինատոր եւ ուռուցքաբանության կոորդինատոր: 2014թ. նշանակվել եմ «Մեդլայֆ» բժշկական կենտրոնի տնօրեն, 2016թ.՝ ՀՀ ոստիկանության Ավանի կենտրոնական հոսպիտալի վիրաբուժական ծառայության պետ, իսկ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի 2017թ. հունվարի 26-ի հրամանով՝ «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար:

– Չնայած դեռ վաղ է որոշակի ծրագրերից խոսել, բայց կարո՞ղ եք ներկայացնել դրանց ընդհանուր դրույթները:

– Իրականում բազում ծրագրեր ունենք, որոնց մի մասը սաղմնային վիճակում է, մյուս մասը՝ գրչին հանձնված, քննարկման փուլում, բայց քանի դեռ հստակ որոշումներ չկան, վաղ է դրանց մասին խոսելը:

Նախ՝ պետք է առանձնացնեմ Գորիս վերադառնալուս մի քանի պատճառները: Իմ վերադարձի մեխը հայրենի քաղաքս է, ծննդավայրս: 12 տարի ապրել եմ Մոսկվայում, եղել Գերցենի անվան գիտահետազոտական, Կազանի ռեգիոնալ, Ուդմուրտիայի կենտրոնական օնկոլոգիական կենտրոններում, մի խոսքով՝ աշխարհի առաջատար կլինիկաներում, որտեղ աշխատելը շատերի երազանքն է, ու բավարարվել այդքանով, ինչպես ասում են՝ «увидеть Париж и умереть»: Բայց իմ նպատակը մշտապես եղել է հայրենիքիս, մեր ժողովրդին ծառայելը, այդ է պատճառը, որ այստեղից երկու անգամ հեռացել, բայց նորից վերադարձել եմ: Երկրորդ պատճառը բխում է առաջինից, այսինքն՝ իմ ցանկությունն ու նպատակները համընկան մարզի նոր ղեկավարության պահանջներին ու կարգախոսներին՝ կապված մեր ազգաբնակչությանը ցուցաբերվող բուժօգնության, բուժսպասարկման որակի բարձրացման, տեղում բուժում ստանալու հստակ քաղաքականության հետ: Առհասարակ մեր բնակչության շրջանում օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներից ելնելով՝ մեծացել է անվստահությունը տեղի հիվանդանոցների բուժանձնակազմի հանդեպ, եւ մեր խնդիրներից է վերականգնել այդ հավատը: Երրորդ պատճառը ներքին վստահությունն է, որ ես մենակ չեմ. եթե ինձ առաջարկեին ղեկավարել մարզի որեւէ այլ քաղաքի բժշկական կենտրոն, գուցեեւ հրաժարվեի, քանի որ այստեղ՝ իմ ծննդավայրում, ինձ հարմարավետ եմ զգում, ճանաչում եմ տեղի բնակչությանը, կարճ ասած՝ իմ տանն եմ, որն ինձ համար եղել է այս հիվանդանոցը, եւ որտեղ ինը տարի աշխատել եմ: Հաջորդ պատճառն առկա ներուժը, ոգին ու ցանկությունն են, որ տեսնում եմ այս կոլեկտիվում: Ցավոք, հատկապես վերջին տարիներին կադրերի լուրջ արտահոսք է եղել, որից ժամանակին անմասն չենք մնացել ես ու կինս: Այժմ վերադառնալու հնարավորություն է ընձեռվել, եկել են նոր ժամանակներ, մեր առջեւ դրվել նոր մարտահրավերներ, կազմվել ոգեւորիչ ծրագրեր, որոնք պետք է ի կատար ածվեն: Իսկ նպատակը մեկն է՝ բնակչությանը տեղում ցուցաբերել ճիշտ, ադեկվատ ու բարձրորակ բուժօգնություն: Մարզպետ Վահե Հակոբյանի ցանկությունն ու պահանջն էլ այն է, որ մարզում բուժօգնությունը չկազմակերպվի կարապը, խեցգետինը եւ գայլածուկը սկզբունքով, որովհետեւ թիմային աշխատանքի արդյունքում է միայն հնարավոր հիվանդին ամենածանր վիճակից դուրս բերել:

Ոչ ոքի համար գաղտնիք չէ, թե սոցիալական ծանր կացության մեջ գտնվող մարդկանց համար որքան դժվար է բուժօգնություն ստանալու համար մայրաքաղաք հասնել: Առնվազն աբսուրդի է հավասար այս իրավիճակը, երբ սոնոգրաֆիա, գլխի շերտագրություն, լապարասկոպիկ որեւէ միջամտություն անելու, օնկոլոգիական կոնսուլտացիա ստանալու կամ թեկուզ մատից փուշ հանելու համար մարդիկ պետք է հասնեն մայրաքաղաք: Այնպես որ՝ մեր ծրագրի առաջնային դրույթը տեղում պատշաճ բուժօգնություն կազմակերպելն է, կադրերի ներհոսքն ապահովելը եւ ապացուցողական բժշկության վերականգնումը, որ վաղուց արդեն մարզում մոռացության է մատնվել: Հստակ ծրագրեր կազմելուց հետո կիրազեկենք բնակչությանը, որ «փչացած հեռախոսի» նման չպետք է տեղեկատվություն ստանա, այլ՝ հստակ ու ճշգրիտ:

– Գորիսում Դուք հայտնի եք որպես հմուտ վիրաբույժ: Մարդկանց հավանաբար հետաքրքրում է հարցը, թե արդյո՞ք կկարողանաք վարչական աշխատանքը համատեղել վիրահատական գործունեության հետ:

– Գագիկ Թունյանին նախեւառաջ ճանաչում են որպես վիրաբույժ: Խոստովանեմ, որ ես հանգստանում եմ վիրահատարանում: Դեռ չի եղել դեպք, որ ղեկավար աշխատանքի ծանր լուծը տանելիս տուժի հիվանդը կամ հակառակը՝ հիվանդով զբաղվելով՝ տուժի վարչատնտեսական իմ գործառույթը: Հուսով եմ՝ Գորիսի բժշկական կենտրոնը նույնպես այդ առումով բացառություն չի լինի: Իմ կատարած աշխատանքի գնահատականը ես չէ, որ պետք է տամ: Միայն վերադաս մարմիններն են իրավասու մեր կատարած աշխատանքի որակը գնահատել. կստացվի այդ աշխատանքը, կշարունակենք, չի ստացվի, ուրեմն կընտրենք այն ուղին, որով ընթանալիս մեր գործունեությունն առավել արդյունավետ կլինի:

– Դուք նշեցիք որ ժամանակին կենտրոնից բժշկական լավագույն կադրերի արտահոսք է տեղի ունեցել: Ինչպե՞ս եք պատրաստվում իրականացնել կադրերի համալրումը՝ լավագույններին վերադարձնելո՞վ, թե՞ մասնագիտական հմտությունները հաշվի առնելով, այլ բժիշկներ հրավիրելով:

– Նախ՝ մեր թիվ մեկ խնդիրներից է պարզել, թե հիվանդանոցի որ ոլորտներն են թիրախային, մեր կադրային ռեզերվը բավարա՞ր է արդյոք անհրաժեշտ բուժսպասարկում իրականացնելու համար: Գիտե՞ք՝ երբեմն գանձը գտնվում է մեզ մոտ, բայց մենք դրա տեղը չգիտենք. ինքն արծաթ է, բայց այնքան չի մշակվել, որ փոշին ծածկել է եւ այն նմանվում է քարի կտորի, այսինքն՝ հնարավորություն պետք է տալ նախեւառաջ առկա կադրերին: Անկեղծ ասած, դեռ չեմ հասցրել ծանոթանալ նրանց հետ, բայց մեր ծրագրերի մի մասի իրականացումը պայմանավորում ենք նախեւառաջ ունեցած կադրերի ներուժով, անհրաժեշտության դեպքում նրանց մասնագիտական որակները շատ կարճ ժամանակամիջոցում էլ ավելի բարձրացնելով: Ցավոք, ժամանակի ընթացքում մարզի տարբեր բժշկական կենտրոններից լավագույն կադրերն են հեռացել: Իհարկե, մեր նշանառության տակ ունենք տարբեր պատճառներով կենտրոնից հեռացած բժշկական կադրերին, բայց վերադարձը պետք է միմիայն ինքնակամ ու նրանց ցանկությամբ լինի. այստեղ կամավոր-պարտադիր սկզբունքը չի կարող գործել: Հուսով եմ՝ իմ օրինակը շատերին կոգեւորի. շատ լավ կլինի, եթե ժամանակին հանրության շրջանում բարի համբավ վայելող բժիշկները ցանկություն հայտնեն վերադառնալ: Մի խոսքով՝ կադրերի համալրման տարբեր եմ՝ նա կկարողանա համատեղել վարչական աշխատանքը բուժական գործի հետ եւ ավելի կկատարելագործի հիվանդանոցի վիրահատական գործունեությունը: Հուսով եմ՝ նրա աշխատանքի շնորհիվ Գորիսի բժշկական կենտրոնն ավելի շատ հաջողություններ կգրանցի եւ էլ ավելի որակյալ բուժսպասարկում կիրականացնի, ինչը բխում է նախեւառաջ ազգաբնակչության շահերից: ■

Գորիսի բժշկական կենտրոնի աշխատակիցները՝ **նոր տնօրենի մասին**

ԼԵՎՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Գորիսի բժշկական կենտրոնի տնօրենի տեղակալ, մաշկավեներաբան

Գորիսի բժշկական կենտրոնում տարիների ընթացքում ձեւավորվել են լավագույն ավանդույթներ, որոնց պահպանմանն են միտված եղել բոլոր ղեկավարների քայլերը, ծրագրերը: Կենտրոնի տնօրենի պաշտոնակատար նշանակված Գագիկ Թունյանը համարյա ինը տարի աշխատել է մեր կենտրոնում եւ քաղաքում լավագույն վիրաբույժի համբավ ունի: Ողջունում ենք որպես վիրաբույժի նրա վերադարձը մեր կենտրոն եւ ասում՝ բարի գալուստ արդեն որպես տնօրեն: Համոզված

ՇՈՂԻԿ ԹՈՒՆՅԱՆ
Թերապեւտիկ բաժանմունքի վարիչ

Գագիկ Թունյանին՝ որպես տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, աշխատակազմին ներկայացնելն անցավ ջերմ մթնոլորտում: Նա այս հիվանդանոցի նախկին կադրերից է, որպես մարդ եւ բժիշկ ունի լավագույն հատկանիշներ, եւ կարծում եմ՝ այս փոփոխությունն էլ ավելի կզարգացնի մեր ավանդույթները եւ կվերականգնի հիվանդների հավատն առ բժիշկ: Գորիսի բժշկական կենտրոնը՝

որպես շրջանային հիվանդանոց, կշարունակի բարձր մակարդակով բուժօգնություն ցուցաբերել գորիսեցիներին եւ, ինչու չէ, նաեւ մարզի բնակչությանը: ■

ԵԿԱՏԵՐԻՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Բժիշկ-լաբորանտ

Գագիկ Թունյանին ճանաչում եմ մեր կենտրոնում աշխատելու տարիներից: Նա առաջին հերթին հայտնի է որպես հմուտ վիրաբույժ, ով իր մասնագիտական հմտությունները ծառայեցրել է տեղի բնակչության որակյալ բուժսպասարկումն ապահովելու համար: Չեմ ուզում ժամանակից շուտ փորձել գնահատական տալ նրա նշանակմանը, քանի որ մի բան է լավ վիրաբույժ լինելը, մեկ այլ բան՝ ադմինիստրատիվ աշխատանք իրականացնելը: Բայց համոզված եմ՝ նրա գիտելիքները, կարողությունները բավարար են հիվանդանոցում կուտակված շատ խնդիրների լուծման, բացթողումների լրացման համար: Իհարկե, ես չէ, որ պետք է խոսեմ կենտրոնի խնդիրներից, բայց ակնկալում եմ դրանց լուծումը տեսնել, ինչի համար Գագիկ Թունյանը պոտենցիալ եւ հնարավորություն ունի: ■

ՌԱՅԱ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ

Թերապեւտ, բժիշկ-լաբորանտ

Դեռեւս տարիներ առաջ եմ հնարավորություն ունեցել մեծ տպավորություն ստանալ Գագիկ Թունյան բժշկի աշխատանքից, քանի որ համագործակցելու բազում առիթներ ենք ունեցել: Գրագետ, բանիմաց ու կազմակերպված բժիշկ է, եւ ուրախ եմ, որ տնօրենի պաշտոնակատար է նշանակվել մեր հող ու ջրում ծնված, նախկինում մեր կոլեկտիվում աշխատած անձնավորությունը: Վստահ եմ՝ որպես տնօրեն նա նույնպես կկարողանա արդարացնել բոլորիս սպասելիքները, քանի որ իր աշխատանքում հետեւողական է, սիրում է համագործակցել, աջակցել, յուրաքանչյուր վրիպում շտկել, ուղղություն ցույց տալ: Այնպես որ՝ մեծ ոգեւորությամբ ենք ընդունել նրան եւ, հուսով ենք, մեր սպասելիքները կարդարանան, շատ հարցերի դրական լուծում կտրվի: ■

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԻՆԱՍՅԱՆ

Ավագ բուժքույր

Շատ ուրախ ենք եւ գոհ, որ Գագիկ Թունյանն է ստանձնել կենտրոնի ղեկավարի պաշտոնը, քանի որ նրա հետ աշխատելու փորձ ունենք, եւ պետք է նշեմ, որ նրա հետ համագործակցությունը հաջողվել է: Թերեւս նրա մարդկային լավագույն հատկանիշներով օժտված լինելու հանգամանքով էին պայմանավորված պաշտոնական ընդունելության ժամանակ կոլեկտիվի ոգեւորությունը, հոտնկայս ծափահարությունները: Ինչպես յուրաքանչյուր հիվանդանոցում, այստեղ նույնպես առաջանում են խնդիրներ, որոնց նա կկարողանա համապատասխան լուծում տալ: Հանուն արդարության պետք է նշեմ, որ քսան տարուց ավելի է՝ ավագ բուժքույր եմ եւ ոչ մի ղեկավարի գործունեությունից դժգոհ չեմ եղել: Համոզված եմ՝ Գագիկ Թունյանը պատնեշի նման կկանգնի կոլեկտիվի թիկունքին: ■

սկզբունքներով կառաջնորդվենք՝ լավագույնների վերադարձ՝ ցանկությամբ պայմանավորված, նրանց համար համապատասխան պայմաններ ստեղծելով, եւ նոր անուններ, ինչու չէ՝ նաեւ երիտասարդներ: Ի վերջո, ամենաճիշտ գնահատականը ժողովուրդն է տալիս՝ ելնելով ցուցաբերած ճիշտ բուժօգնությունից, սպասարկման որակից: Իհարկե, չարախոսներ էլ կլինեն. չէ՞ որ «Семья без уродов не бывает»:

– Ինչպե՞ս ընդունեց հիվանդանոցի աշխատակազմը Ձեր նշանակումը:

– Ավելի ճիշտ կլինի այդ հարցը տալ աշխատակիցներին: Կարող եմ ասել, որ երեկ դահլիճ մտնելիս կոլեգաներիս ոգեւորիչ ծափահարություններից քիչ մը հուզվեցի: Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակվելու մեկ որոշմամբ կրկին վերադարձա հայրենի քաղաք, հարազատ կոլեկտիվ ու միջավայր, ինչի համար շնորհակալ եմ թե՛ ղեկավարությանը, թե՛ նախախնամությանը: Սա պարտավորվածության ծանր բեռ է, եւ պետք է արդարացնեմ թե՛ ժողովրդի, թե՛ կոլեկտիվի, թե՛ ղեկավարության սպասելիքները:

– Ի՞նչ ակնկալիք ունեք կոլեկտիվից:

– Համոզված եմ՝ Գորիսի բժշկական կենտրոնի ողջ անձնակազմը՝ սկսած պահակից մինչեւ փոխտնօրեն, հավատում է եւ պարտավոր է հավատալ, որ այս նշանակումը նախեւառաջ անհրաժեշտ է հենց իրենց: Հիվանդանոցում կատարած առաջին իսկ շրջայցից ոգեւորություն նկատեցի աշխատակիցների շրջանում: Վստահ եմ՝ համատեղ ուժերով կստացվի հաղթահարել բոլոր դժվարությունները, ավելի բարձր մակարդակի հասցնել կենտրոնի բուժսպասարկումը: Լեթարգիկ քուն մտած աշխատակիցները հնարավորինս շուտ պետք է արթնանան: Պատկերավոր ասած, հունվարի 30-ից մարզպետ Վահե Հակոբյանը շոգեքարշի շարժվելու մեկնարկը տվել է. չեմ ասի, որ միանգամից 100 կմ/ժամ արագությամբ կընթանանք, բայց դանդաղ ու հաստատուն կշարժվենք առաջ: Նրանք, ովքեր պատրաստ են մեզ հետ առաջ շարժվելու, ովքեր ցանկություն ունեն այս թիմում աշխատելու, սովորելու կամ արդեն ունեցած գիտելիքները կատարելագործելու, թող նստեն շոգեքարշ: Ովքեր չեն հասցնի մեր ընթացքին, կբարձրացնենք, ովքեր կփորձեն դուրս թռչել, որ հավասար է ինքնասպանության, մեկ կամ երկու անգամ կկանխենք, ովքեր մեր հիվանդանոցի պատերի գույները չհավանեն, չենք հակադրվի: Կամքն իրենցն է, կողջունենք նրանց, ովքեր ըմբռնումով կմոտենան մեր պահանջներին եւ կաջակցեն մեր նպատակի իրագործմանը, որ մեկն է՝ եղած հզոր ներուժն օգտագործելով ու աստիճանաբար կատարելագործվելով՝ ծառայել ժողովրդին:

Հարցազրույցը՝
ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

Հանրային քննարկում Մեղրիում

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով նախնական փորձաքննության գործընթացի շրջանակներում սույն թվականի փետրվարի 1-ին գեղագիտության ազգային կենտրոնի Մեղրու մասնաճյուղի շենքում տեղի ունեցան հանրային քննարկումներ:

Քննարկումն իրականացրին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ը (փորձագետ՝ Կարինե Մովսիսյան) եւ Մեղրի համայնքը (համայնքի ղեկավար՝ Մխիթար Զաքարյան): «Լիճքվազ» ՓԲԸ-ն ներկայացնում էին ընկերության հասարակայնության հետ կապերի եւ սոցիալական քաղաքականության գծով գլխավոր տնօրենի տեղակալ Վահրամ Ավագյանը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ծառայություն մատուցող ընկերության ներկայացուցիչ Հովհաննես Նիկողոսյանը:

Ներկա էր նաեւ ընկերության գլխավոր տնօրեն Դմիտրի Ուշկովը:

Հանրային քննարկմանը մասնակցում էին «Civil voice» եւ «Մեղրու կանանց ռեսուրս կենտրոն» հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, բնապահպաններ, Մեղրի համայնքի Լեհվազ, Վարդանիձոր եւ Մեղրի բնակավայրերի քաղաքացիներ:

Հանրային լսումն իր ողջույնի խոսքով բացեց Մեղրի համայնքի ղեկավար Մխիթար Զաքարյանը: Այնուհետեւ հանքավայրի շահագործման ծրագրի պատասխանատուները ներկայացրին նախատեսվող աշխատանքների ծավալը, շրջակա միջավայրի վրա ունեցող ազդեցությունը, ինչպես նաեւ իրականացվելիք սոցիալական քաղաքականության ուղղությունները:

Քննարկումն անցավ շահագրգիռ, ակտիվ մթնոլորտում: Նկատելի էր, որ հետաքրքրությունը քննարկվող թեմայի վերաբերյալ բավականին մեծ է: Եղան բազմաթիվ հարցադրումներ, որոնք վերաբերում էին բնապահպանական եւ սոցիալական ոլորտներին:

Հիշեցնենք, որ վերջերս «Պոլիմետալ» խմբի մեջ մտնող «Լիճքվազ» ՓԲ ընկերության եւ Մեղրի համայնքի միջեւ կնքվեց սոցիալ-տնտեսական համագործակցության մասին համաձայնագիր, որի շրջանակներում 2017-2018թթ. ընթացքում Մեղրի համայնքում կներդրվի 37 մլն ՀՀ դրամ: Այդ միջոցներով Մեղրի համայնքի Վարդանիձոր բնակավայրում կկառուցվի մանկապարտեզ: Շուտով կսկսվեն շինարարական աշխատանքները:

Հանուն մաքուր եւ առողջ կենցաղի

Գորիսի Գ. Աշոտի անվան մշակույթի տանը հավաքվածները հրավիրված էին մասնակցելու «Մաքուր դաշինք» ծրագրի հերթական բաղադրիչի քննարկմանը: Այն ֆինանսավորվում է Եվրամիության կողմից եւ նպատակ ունի աջակցելու Սյունիքի մարզի բազմաբնակավայր Գորիս եւ Գորայք համայնքների ութ բնակավայրերին՝ հիմնելու եւ բարելավելու աղբահանության համայնքային ծառայությունը:

Որ, իրոք, այսօր ամենուր համայնքների առջեւ ծառացած խնդիրներից իրենից առաջնահերթություն է ներկայացնում աղբահանության ճիշտ կազմակերպումը, դա անվիճելի իրողություն է: Աղբահանության ճիշտ կազմակերպում. նշանակում է, որ համայնքն ապրում է մաքուր, առողջ կենցաղով, մարդկանց մեջ ձեւավորվել է աղբը դրա համար նախատեսված վայրում թափելու մշակույթ, համայնքի բնակիչները պատասխանատվություն են կրում իրենց բնակավայրերում սանիտարահիգիենիկ պայմանների ստեղծմանը նպաստելը, կան աղբամաններ, աղբատար մեքենաներ, աղբահանությունը կատարվում է ժամանակին: Իսկ դրա համար անհրաժեշտ է նաեւ բարձրացնել մարդկանց իրազեկությունը, որն էլ իր հերթին կնպաստի մարդկանց գիտակցության վրա, եւ նրանք կենցաղային աղբը կթափեն աղբամանների մեջ:

Քննարկման մասնակիցներից Գորիս համայնքի ղեկավար Վաչագան Ադունցը, Գորիսի համայնքների միության նախագահ Գրիշա Հարությունյանը, Վերիշեն, Քարահունջ, Ակներ բնակավայրերի լիազոր ներկայացուցիչներ Արարատ Օրդյանը, Լուսինե Ավետյանը, Սպարտակ Մինասյանը, ուրիշներ, առաջարկում էին տարբեր մոդելներ՝ աղբահանության նորմալ ընթացք ապահովելու ուղղությամբ: Ինչ մոդել ընտրել, որ լինի արդյունավետ, որ այլեւս փողոցներում, թաղամասերում, գետում, ձորերում աղբի «հանքավայրեր» չլինեն: Առաջարկվող բոլոր մոտեցումները հետաքրքիր էին եւ գործ դառնող: Առաջարկվում էր նաեւ ըստ ժամանակացույցի կազմակերպել աղբահանությունը, որի պարագայում կլինի ֆիքսված ժամ, եւ տնատիրություններն աղբը կլցնեն աղբատար մեքենաները: Իսկ եթե բնակիչն այդ ժամին աշխատանքի է, ինչ անել նման դեպքում: Սեփական տների մոտ աղբամանների տեղադրումը եւս խնդիրներ է առաջացնում. ոչ ոք չի համաձայնում իր տան մոտ աղբաման տեղադրել: Բազմաբնակարան շենքերի մոտ աղբամանների տեղադրումն էլ իր խնդիրն ունի. կատուները, շները մտնում են աղբամանների մեջ՝ կեր գտնելու համար աղբը ցաք ու ցրիվ տալիս, հաճախ էլ բնակիչներն աղբի տոպրակը հեռվից նետում են աղբարկղ՝ իրենց ռմբարկու մարզիկի տեղ դրած եւ, խնդրեմ, արդյունքը. աղբի տոպրակը հայտնվում է այլ տեղում: Դրա համար էլ քամոտ օրերին թաղամասերում տոպրակների «շուրջպար» է սկսվում:

Կոնկրետ ոչ մի մոդելի վրա կանգ չառան քննարկման մասնակիցները: Բոլոր առաջարկություններն իրենցից հետաքրքրություն ներկայացնելուց բացի ունեին թերի եւ դրական կողմեր: Առաջիկայում բոլոր առաջարկությունները վերջնական տեսքի կբերվեն եւ համայնքներում աղբահանության կազմակեպումը բարելավելու համար տվյալ համայնքին բնորոշ լուծումներ կտրվեն:

Բացի դրանից՝ «Մաքուր դաշինք» ծրագրի շրջանակներում Գորիս եւ Սիսիան համայնքները կստանան մեկական աղբատար մեքենա, աղբարկղեր, կցանկապատվեն նշված համայնքների գլխավոր աղբավայրերը:

ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ

ՍԱՇԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ. «Սա մեր հայրենիքն է, մենք պիտի շենացնենք, յուրաքանչյուր խնդրի շուրջ խորհրդածենք...»

էջ 5

«Չորրորդ կարգի վթարային շենք է», – տեղեկացնում են գրույցի մասնակիցները՝ իրենց աշխատանքային պայմաններն այսպես բնութագրելով՝ քարանձավային վիճակ է, ծառայություն մատուցելիս ամաչում ես:

Վերը նշվեց խմելու ջրի մասին, որի մատակարարումը խնդիրներ է առաջացնում ձմռան ամիսներին: Խմելու ջրի ներքին ցանցի բարելավման ուղղությամբ ծրագրեր են իրականացվել, բայց ոչ մի արդյունք չեն տվել, խնդիրը գլոբալ լուծում է պահանջում: Պարզվում է, որ ոռոգման ջրի վիճակն էլ առանձնապես բարվոք չէ: Խորհրդային տարիներին մոտ 360 հեկտար հողատարածություն անձրեւացման համակարգով ոռոգվում էր, այժմ ոռոգելի հողատարածությունները կիսով չափ կրճատվել են…

– Ջրատարներն այն աստիճան են մաշված, որ մի տեղ նորոգելուց մի այլ տեղ շարքից դուրս է գալիս, – ներկայացնում են ոռոգման համակարգի տխուր վիճակը եւ հավելում, որ միջազգային կազմակերպությունները, կոնկրետ գործերի փոխարեն, բոլ-բոլ խորհրդատվական ծրագրեր են իրականացնում, «այնքան խորհուրդ են տվել է, որ էլ չեղած»:

Չորերի գյուղերը (Դարբաս, Շամբ, Գետաթաղ, Լոր, Շենաթաղ) չեն օգտվում կապույտ վառելիքից, թեպետ Իրան-Հայաստան գազատարն այդ բնակավայրերից ընդամենը երկու կիլոմետր հեռավորությամբ է անցնում: Երբ հանրապետության վարչապետ Կարեն Կարապետյանը Գորիսում խորհրդակցություն էր անցկացնում, Շամբի «Տատնի» գործարանի տնօրենը բարձրաձայնեց համայնքի գազիֆիկացման մասին, բայց հստակ պատասխան չեղավ: Թեեւ դա էլ է հասկանալի. «Գազպրոմ-Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության համար շահութաբեր չէ մանր-մունր բնակավայրերը գազիֆիկացնելը, իրենց բիզնես-պլանի մեջ դրանք չեն մտնում…

Գյուղմթերքների իրացման խնդիրը, համեմատ մյուս համայնքների, Դարբասում լուծված է, շնորհիվ Շամբի պահածոների գործարանի: Գյուղում հիմնականում զբաղվում են այգեգործությամբ, բանջարաբոստանային բույսերի մշակումով: Անասնապահությունը զարգացնելու համար արոտավայրերը սակավ են: *«Մեզ մոտ ամենաքաղցր խնձորն է լինում, լավագույն կաղամբն ու կարտոֆիլը, ժամանակին այստեղ ծմերուկ եւ ծիրան էր աճում, երբ Շամբի լիճը չկար»,* – հպարտանում են, բայց նաեւ նշում, որ մեկը կարող է տասը հեկտար կաղամբ աճեցնել եւ ձեռքը կրակն ընկնել, գյուղացին իր արտադրածն իրացնելու տեղ չունի: *«Ծրագրված արտադրություն չկա, գյուղացին չգիտի՝ ինչ աճեցնի, ինչ չափով»,* – եզրակացնում են մեր զրուցակիցները:

Դե ձորեր գնացող ճանապարհի մասին չենք խոսում, քանզի հազար անգամ բարձրացված ու այդպես էլ անտեսված եւ անուշադրության մատնված հարց է:

Միակ բանը, որ փոքրիշատե հուսադրող է, այն է, որ համայնքում արդյունաբերություն է կազմակերպված: Մոսկվայաբնակ գործարարներ Արամ եւ Արմեն Ստեփանյանների ֆինանսավորմամբ ու աջակցությամբ 2010-ին Շամբում կառուցվել է ջրերի արտադրության գործարանը («Արսեն եւ Ներսես» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն), օծվել նրանց հովանավորությամբ կառուցված սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցին: Քիչ ավելի ուշ կառուցվել եւ շահագործման է հանձնվել պահածոների («Շամբ-բիզնես» ՍՊ ընկերություն) գործարանը: Նրանց հատկացրած միջոցներով համայնքում արվեստի դպրոց է գործում, կառուցվում է կենցաղի տուն: Նաեւ կանաչ գոտի պիտի կառուցվի, որտեղ կտեղադրվի ազատագրական պայքարի նվիրյալ Գարեգին Նժդեհի արձանը:

2015-ի աշնանը բարերար եղբայրների հերթական նախաձեռնությունը Համո Սահյանի «Պապը» բանաստեղծության հիման վրա ստեղծված բրոնզաձույլ արձանի հովանավորությունն էր (քանդակագործ՝ Գետիկ Բաղդասարյան):

«Եթե ամեն գյուղում այսպիսի բարերարներ լինեին, մեր գյուղերն այդպես կամաց-կամաց չէին դատարկվի», – ասում է համայնքապետը: *«Գյուղը մեծապես վերափոխվել է այդ մարդկանց շնորհիվ, ավելին կասեմ, նրանք ուղղակի հեղափոխություն կատարեցին գյուղում, եթե Ստեփանյան եղբայրները չլինեին, մեր վիճակն էլ կլիներ մյուս գյուղերի պես: Ի՞նչն է ուշագրավ, նրանք սովորական գործարար տղաներ են, միլիարդատերեր չեն, բայց հոգու պարտք են համարում իրենց վաստակի մի մասը ներդնել հայրենի եզերքի շենացման մեջ: Եվ արդյունքն առկա է, արտադրության մեջ ներգրավված է մոտ 90 երիտասարդ, նրանց աչքն արդեն դրսի վրա չէ,* – ասում է համայնքապետի տեղակալ Սենիկ Միքայելյանը եւ հավելում, – *գործարանը հիմնադրման օրվանից մինչեւ այսօր վնասով է աշխատել, բայց դա նրանց չի անհանգստացրել, որովհետեւ մի բան են մտածել՝ աշխատատեղեր ստեղծել իրենց համագյուղացիների համար: Միայն վեց տարի հետո, հիմա են ինքնածախսածածկումով աշխատում»:*

Սենիկ Միքայելյան
Դարբասի համայնքապետի տեղակալ

Այնուամենայնիվ, համայնքի ժողովրդագրական պատկերը լավատեսության չի մղում: Ձմեռային այս զորակոչին Դարբասից երեք, իսկ Շամբից մեկ զինակոչիկ է զորակոչվել հայոց բանակ: Նաեւ տխուր փաստ հայտնեցին. երիտասարդ ընտանիքը երկու երեխայից ավելի չի ցանկանում ունենալ (երկու-երեք տասնամյակ առաջ գյուղական ընտանիքում յոթ-ութ մանուկ էր հասակ առնում): Նախկինում 300 աշակերտ ունեցող Դարբասի դպրոցում այժմ 74 աշակերտ է սովորում: Հընթացս նշենք, որ գյուղի կրթօջախը եւս նորոգելու հրամայական պահանջի առջեւ է կանգնած:

Նաեւ ցանկացանք համայնքապետի կարծիքն իմանալ համայնքների խոշորացման մասին, քանի որ այդ առիթով տարբեր մարդկանց կողմից հնչում են կողմ եւ դեմ կարծիքներ: Նա փոխանցեց, որ չի ցանկանում իրադարձություններից առաջ ընկնել՝ ասելով, որ ժամանակը ցույց կտա, բայց որ համայնքների խոշորացման հետեւանքով մարդիկ կսկսեն արտագաղթել, դա իր համար միանշանակ է. *«Դիտարկենք Լծեն գյուղի օրինակը,* – ասում է համայնքի ղեկավարը, – *Լծենի գյուղապետարանը վեց աշխատակից ունի, խոշորացումից հետո այդ վեց ընտանիքը գյուղում կմնա՞: Գյուղը ժամանակի ընթացքում կվերանա քարտեզի վրայից, քսան տարի հետո գերեզմանների վրա խոտ աճած կլինի»: «Եթե իշխանությունները համայնքապետարանների աշխատանքին հետամուտ լինեն այնպես, ինչպես հետամուտ են համայնքները խոշորացնելու գործում, ապա գյուղերում բարվոք վիճակ կլինի»,* – կարծում է Սաշա Ստեփանյանը: Տեղեկացնում են, որ որոշ բնակավայրերում արոտավայրերի կառավարման խնդրում համայնքների խոշորացումից հետո արդեն քաոսային վիճակ է ստեղծվել:

… Անցյալ տարի համայնքը նաեւ ծանր, անդառնալի կորուստ ունեցավ, անամոթ վիշտ: Ապրիլյան պատերազմում զոհվեց համայնքի ղեկավար Մայիս Միրզոյանը՝ Արցախյան պատերազմի ակտիվ մասնակից, հայոց ազգային բանակի կազմավորման ակունքների մոտ կանգնած եւ նրա կայացմանը մեծապես նպաստած անձնավորություն: 2011-ին փոխգնդապետի կոչումով կենսաթոշակի անցավ եւ լծվեց հայրենի եզերքի շենացման գործին: Բայց անկատար մնացին բազում շատ ծրագրեր…

– Մայիս Միրզոյանի հիշատակը միշտ կհարգենք, նա լավագույն մարդ ու ղեկավար էր: Բոլորս ոգեշնչված էինք նրա ներկայությամբ, աշխատելու եւ կոլեկտիվը ղեկավարելու նրա ոճով: Ինքը զինվորական մարդ էր, նրա կյանքի մի զգալի հատվածն անցել էր բանակում, համայնքի մասին քիչ էր տեղեկացված, բայց համայնքի ղեկավար աշխատած տարիներին, ինչպես հարկն է, խորամուխ եղավ նրա հիմնախնդիրների մեջ՝ խմելու եւ ոռոգման ջրի, ճանապարհի, «Դարբաս-Ըղվերդ» հայրենակցական միության ստեղծման գործում մեծ ավանդ ունեցավ: Շատ ցավալի, անսպասելի էր նրա կորուստը, – ավագ գործընկերոջ մասին այդպես արտահայտվեց համայնքի ղեկավարի տեղակալ Սենիկ Միքայելյանը:

…Մեր այցի վերջին կանգառը Շամբ գյուղն էր: Տպավորությունը հիանալի էր՝ առատ ձյունից հետո մի քանի տասնյակ երեխաներ սահնակներով սահելու եւ գեղեցիկ ձմեռը վայելելու էին ելել: Տեսարանն իսկապես ուշագրավ էր. վաղուց մեր լեռնային գյուղերում երեխաների նման հանդես չէինք տեսել. ափսոս, որ ժամանակի պատճառով չկարողացանք երեխաների հետ ձնագնդի խաղալ…

Ահա թե ինչ արդյունք կարող է տալ այնտեղ կառուցված եւ գործող արդյունաբերական երկու ձեռնարկությունը՝ մոտ 100 աշխատատեղով:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Շամբի պահածոների գործարանում

Տեառնընդառաջի օրինության բարեմաղթանք

Տ. ՄԱԿԱՐ ՎՐԴ. ՀԱԿՈԲՅԱՆ
Տիրախնամ Այունյաց Թեմի
Առաջնորդական տեղապահ

Սիրելի եւ հավատավո՛ր նորապսակներ,

Այունյաց Թեմի Տիրախնամ Առաջնորդարանից բերում ենք ձեզ բյուր օրհնություն եւ ամենայն բարյաց մեր բարեմաղթանքները:

Սուրբ Ծննդյան օրվանից 40 օր հետո, մեծ հանդիսությամբ նշվում է քառասուն օրական Մանուկ Փրկչի՝ մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի Տաճար ընծայաբերման տոնը՝ Տեառնընդառաջը:

Հնում քառասուն թիվը խորհրդավոր ու նախամեծար է եղել: Այս թիվը պատվի արժանացավ նաեւ Տիրոջ կողմից Իր քառասնօրյա գալստյամբ, անապատում քառասնօրյա փորձություններով եւ Հարությունից հետո քառասուն օր աշակերտներին երեւալով:

Երբ լրացան Մարիամի սրբագործման օրերը, Հովսեփն ու Մարիամը, վերցնելով Մանուկ Հիսուսին, եկան Երուսաղեմ: Երբ նրանք մոտեցան Տաճարին, արդեն մութ էր, եւ Տաճարի արեւելյան դուռը, որ վաղուց ի վեր փակված էր, Տիրոջ մոտենալու պահին ինքնիրեն բացվեց, որով կատարվեց Եզեկիել մարգարեի խոսքը. «Այդ դուռը փակ է մնալու ու չի բացվելու, նրանով ոչ ոք չի անցնելու, որպեսզի Իսրայելի Տեր Աստվածը մտնի այնտեղով: Այն փակ է լինելու, որովհետեւ առաջնորդ Իշխանն է ներսում նստելու՝ Տիրոջ առաջ հաց ուտելու համար: Նա մտնելու է դռան կամարի տակի ճանապարհով եւ նույն ճանապարհով էլ դուրս է գալու» (Եզեկ. ԽԴ 1-3): Այսինքն, ըստ մարգարեության, տաճարի արեւելյան դուռը բացվելու էր միայն Մեր Փրկիչ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի առջեւ, եւ դա այդպես էլ եղավ:

Եվ դռները բացվելուն պես՝ մեծ դղրդյուն եղավ քաղաքում, որից բնակիչները դուրս վազեցին իրենց տներից, եւ քանի որ արդեն մութ էր, վառվող ջահեր ու ճրագներ ձեռքներին՝ գնացին Տաճար՝ տեսնելու Տաճար եկողին եւ, միմյանց ձայն տալով, ասացին. «Տերն անցավ այս դռնով»: Եվ մտնելով Տաճար՝ տեսան Հովսեփին ու Մարիամին՝ Հիսուս Մանկանը գրկում:

Այսօր մենք, Այունյաց մեր Թեմում նույն օրինակով ենք կատարում Տիրոջ՝ «Քառասնօրյա տաճար գալստյան» տոնի նախատոնակը: Երեկոյան վառվող ջահերով ենք սկսում խորհրդի կատարումը, որովհետեւ մեր Տերը երեկոյան տաճար եկավ, քանի որ ժամանակը երեկոյան լրացավ, նաեւ Նրա գալուստը դարի երեկոյին եղավ: Նաեւ Տերն է ասում. «Երկրի վրա կրակ գցելու եկա» (Ղուկ. ԺԲ 49), որը բորբոքվեց շատերի մեջ Քրիստոսի սիրո համար:

Քրիստոս Օրենքի ու մարգարեների լրումն է: Առաքյալը վկայում է, որ Օրենքը դաստիարակ էր ու սնուցիչ, սակայն այն անկարող էր մարդկանց արդարացնել ու փրկել (Գաղ. 3; 24), ինչպես նաեւ ծանր էր, եւ մարդիկ չէին կարողանում այն կատարել: Եվ երբ մանկությունն անցավ, եւ եկավ կատարյալ հոգեւոր հասակը, Աստծու Որդին եկավ աշխարհ եւ մտավ Օրենքի տակ, որպեսզի գնի ու ազատի նրանց, ովքեր Օրենքի տակ էին եւ ազատելով Օրենքի տկարությունից՝ տվեց կարող ու կատարյալ հավատ, որպեսզի հավատով արդարանանք, ինչպես ասում է առաքյալը (Գաղ. Գ 8):

Ս. Գիրքը վկայում է, որ տղամարդը եւ կինը պետք է ընկերակից, օգնական ու լծակից լինեն միմյանց՝ դառնալով մեկ մարմին: Արարիչն Աստված օրհնեց նախաստեղծ ու մարդկության նախածնող զույգին, որով օրհնվեց ողջ մարդկությունը եւ ամեն մի զույգ. «Աճեցե՛ք, բազմացե՛ք, լցրե՛ք երկիրը, տիրեցե՛ք դրան»:

Ի հաստատումն աստվածաշունչ այդ վկայության՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ, Տեառնընդառաջը հռչակվեց նորապսակների օրհնության օր: Փետրվարի 14-ին՝ Տեառնընդառաջի տոնական Սուրբ եւ Անմահ Պատարագից հետո, բոլոր եկեղեցիներում կատարվում է նորապսակների օրհնության կարգ՝ զորացնելու նրանց սիրո եւ հավատարմության դաշինքը:

Հիշեցե՛ք միայն, սերը չի՛ վաճառվում, քանզի Աստված Սե՛ր է:

Առ Ամենակալն Աստված աղոթքով մաղթում ենք, որ երկնային Տերը օրհնի ամուսնական պսակները հանուր Այունյաց Թեմում՝ անարատ պահելով նրանց, շնորհելով աստվածային սեր, խաղաղություն, որդեծնություն, որպեսզի նորապսակ զույգերի քրիստոնյա հետնորդները անդորրի եւ աստվածահաճության մեջ բնակվեն այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից: Ամեն

Սիրով եւ օրհնությամբ՝
Տ. Մակար վրդ. Հակոբյան

Սուրբ Սարգիս Զորավարի տոնի օրհնության ուղերձ

Սիրելի եւ բարեպաշտ երիտասա՛րդ սիրահարներ, սուրբ Սարգիս զորավարի տոնի առթիվ Այունյաց Թեմի Տիրախնամ Առաջնորդարանից բերում ենք ձեզ բյուր օրհնություն եւ ամենայն բարյաց մեր բարեմաղթանքները:

Սուրբ Սարգսի տոնի օրվան սպասում են հատկապես սիրահար աղջիկներն ու տղաները, որովհետեւ այդ օրը սովորություն է աղի բլիթ պատրաստել եւ ուտել՝ երազում իմանալու համար, թե ով է ապագա հարսնացուն կամ փեսացուն:

Աղը եւ հացը կապվում են տոնին նախորդող առաջավորաց պահքի հետ, որի շրջանը երբեմն կոչվում է նաեւ աղուհացի օրեր:

Սուրբ Սարգիս զորավարի նահատակության տոնը կատարում ենք Առաջավորաց պահքին հաջորդող շաբաթ օրը: Սակայն, սիրելի՛ներ, այս պահքը նրա անունով չէ՛, եւ պահքն էլ նահատակված սրբի համար չե՛նք պահում, այլ՝ Աստծու: Պետք է ասել, որ ամեն պահք Աստծունն է եւ ո՛չ մարդունը: Պահքն Աստծու համար ենք պահում՝ մեր մեղքերի թողության եւ առաջին սրբերի հնգօրյա պահքին մասնակից լինելու համար, իսկ շաբաթ օրը տոնում ենք Սուրբ Սարգսի տոնը: Ավարտելով պահքը՝ սրբերի միջնորդությանն ենք դիմում, որպեսզի նրանց բարեխոսությամբ ընդունվեն մեր պահքն ու աղոթքները: Եվ այդ օրվա վերակացուները եւ տոների տերերը նրանք են, ինչպես նաեւ՝ պահողներին ու հույսով տոնողներին զորավիգ եղողները, պահապաններն ու բարեխոսները՝ Քրիստոս Աստծու հրամանով:

Այսպիսով՝ երեք պատճառով է պահքը կոչվում սրբերի անունով: Առաջին՝ որ նրանց նահատակության օրն այդ պահքի օրերին է պատահել, երկրորդ՝ նրանց անուններով պահքերն ենք զանազանում, եւ երրորդ՝ նրանց բարեխոսությանն ենք դիմում, որպեսզի ընդունվի մեր պահքը, եւ Ամենաողորմած, Բարեգութ եւ Մարդասերն Աստված, նայելով Իրեն սիրող սրբերի նահատակությանը, նրանց բարեխոսությամբ ընդունի մեր աղաչանքները եւ կատարի մեր խնդրվածքները՝ թողություն շնորհելով մեր բոլոր մեղքերին ու հանցանքներին, եւ Իր սրբերին տոնակից դարձնի բոլոր հավատացյալներին՝ Քրիստոսի հավատով, հույսով ու սիրով:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ՝ Սուրբ Սարգիս Զորավարի տոնը հռչակվեց իբրեւ երիտասարդների եւ սիրահարների օրհնության օր:

Սիրելի՛ երիտասարդներ, այսօր դուք եռանդով ու սիրով լեցուն եք եւ կանգնած եք կյանքի մի նոր շրջանի նախաշեմին: Հաստատուն քայլերով եւ անսայթաք երթով ընթացեք ձեր կենաց շավիղներով, կյանքի ամբարած ձեր գիտելիքները եւ հոգեւոր արժեքների ճանաչողությունն առավել զորացրեք ու կյանք դարձրեք՝ ի սեր ձեր հոգում խնամքով փայփայած բարի իղձերի ու երազների իրականացման:

Մեր աղոթքն է առ Ամենաբարին Աստված, որ Նա օրհնի ձեզ եւ ամենազոր Իր Աջը պահապան ու զորավիգ դարձնի ամենքիդ, որպեսզի զարդարյալ Իր երկնապարգեւ շնորհներով՝ աստվածահաճո ընթացքով, ազնիվ ու առաքինի գործերով, կարողանաք շենացնել մեր Հայրենիքը, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ ուրախություն պարգեւեք մեր ժողովրդին: Թող մեր հայրերի սուրբ հավատքի անմար ջահը հարաժամ լուսավորի ձեր կյանքի նոր ուղին եւ առաջնորդի դեպի արդարը, ճշմարիտը եւ բարին:

Սիրով եւ օրհնությամբ.
Տ. Մակար վրդ. Հակոբյան
Առաջնորդական տեղապահ



Գորիսի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի

Ցուցահանդես՝ նվիրված գեղանկարիչ Ռոբերտ Կամոյանի 80-ամյակին

Հունվարի 18-ին «Կապան մոլ» առեւտրի կենտրոնի առաջին հարկում հանդիսավորությամբ բացվեց կապանցի տաղանդավոր գեղանկարիչ Ռոբերտ Կամոյանի ծննդյան 80-ամյակին նվիրված ցուցահանդեսը, որի սկիզբն ազդարարեց Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Հեբոյանը Տերունական աղոթքով:

Բացման խոսքով հանդես եկավ Կապանի մշակույթի եւ հասարակական գործիչ Սուսաննա Մարտիրոսյանը, ով նախեւառաջ շնորհակալություն հայտնեց ցուցահանդեսի կայացմանն աջակցողներին՝ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանին, Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանին, «Կապան մոլ» առեւտրի կենտրոնի սեփականատեր Արարատ Կարապետյանին, ինչպես նաեւ «Այունյաց երկիր» թերթի գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանին եւ թերթի ողջ անձնակազմին՝ Կամոյանի 80-ամյակին նվիրված հատուկ համար թողարկելու համար:

«Վերադարձ արմատներին, ակունքներին, իսկ մեր ակունքը մեկն է՝ հավատքը, միջնադարյան բանաստեղծությունն ու մանրանկարչությունը. ով կարողանա ականջ դնել, մաքուր պահել դրանք, նա կկարողանա դաշնագրվել ստեղծվելիք նորի հետ, – սա է Կամոյանի պատգամը բոլորիս, – *ուսումնասիրելու, կրթվելու տարածք է նրա ժառանգությունը, եկեք կամոյանական ուրույն աշխարհին հաղորդակից լինենք, որի թիկունքում զգալու ենք նրա ներկայությունը»,* – մասնավորապես նշեց Սուսաննա Մարտիրոսյանը:

Ելույթի խոսքում կապանցի գեղանկարիչ Հրանտ Էլչյանը կարեւորեց Ռոբերտ Կամոյան գեղանկարչի դերը մեր քաղաքի մշակութային տարեգրության մեջ՝ նշելով, որ նա Կապանում հիմնադրեց գեղանկարչության հաստոցային գործունեության միակ տարբերակը, այսինքն՝ արվեստանոցային մտածողություն, ստեղծագործություն, անհատականություն: *«Կամոյանի կտավները նման են մեր սահմանները պաշտպանող զինվորներին, որոնց ոգին միշտ արթուն է: Մեզնից անդին՝ շիրմում, նրա մարմինն է, իսկ ոգին այնտեղ է՝ իր կտավներում, մեզ հետ ու ընդմիշտ.... Փառք նրա որդիներին, որ նրա երկու լավագույն կտավներից են...»,* – մասնավորապես նշեց Հրանտ Էլչյանը:

Քաջարանի հոգեւոր հովիվ տեր Շիրակ քահանա Խանոյանն այսպես բնութագրեց Ռոբերտ Կամոյանին. *«Մարդ, որ երբեք չէր դադարում վեր սլանալուց, բայց միեւնույն ժամանակ, վերեւներում չմնալով, վերադառնում էր իր հայրենիք՝ Վաչագան: Յուրաքանչյուրս հաղորդակից ենք եղել նրա ժառանգությանը, շփվել նրա հետ եւ նրա մի մասն ենք մեր մեջ պահում: Թող Աստված ողորմություն անի նրա հոգին՝ լուսե խորաններից ներս ընդունելով նրան, ում ժառանգությամբ մեր սերունդները պետք է կրթվեն եւ դաստիարակվեն»:* Տեր Շիրակը կոչ արեց նաեւ

էջ 10

Օրվա հարցը. մինչեւ ե՞րբ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 180-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գիշերային ժամերին՝ 23-ից մինչեւ 7-ն ընկած ժամանակահատվածում, հրագործական սարքեր օգտագործելն առաջացնում է վարչական տուգանք՝ 100000 դրամի չափով, նշված արարքի կրկնությունը տույժի նշանակման օրվանից հետո մեկ տարվա ընթացքում՝ ենթակա է նվազագույն աշխատավարձի երկու հարյուրապատիկի չափով տուգանքի: ՀՀ կառավարության 2012թ. օգոստոսի 9-ի համապատասխան որոշմամբ՝ «լռության ժամի» համար բացառություն է սահմանված միայն Ամանորի կապակցությամբ՝ թույլատրվում է հրավառություն կազմակերպել դեկտեմբերի 31-ի ժամը 23-ից մինչեւ հունվարի 1-ի ժամը 1-ը:

Բայց արի ու տես, որ Գորիսում այս որոշումը, մեղմ ասած, ոչ ոք բանի տեղ չի դնում: Ով երբ, որ ժամի ասես, կազմակերպում է գիշերային հրավառություն: Ամիսներ առաջ էլ Գորիսի Գետափնյա թաղամասում ժամը 4-ի սահմաններում կազմակերպված հրավառությունը փողոց էր հանել շատերին՝ ներքնազգեստով, իսկ ով փոքրիկ ուներ, երեխային գրկած: Ամենաթարմ օրինակը գրանցվեց հունվարի 26-ին: Ժամը 00.25--30-ի սահմաններում Գորիսում կրկին հրավառություն էր: Հետաքրքիր է, պատկան մարմիններն ի՞նչ են մտածում, մինչեւ ե՞րբ Գորիսում գիշերային ուշ ժամերին հրավառությունը պետք է էլ ավելի վատացնի հիվանդների ինքնազգացողությունը, փոքրիկները սարսափած վեր թռչեն անկողնուց, տարեցներն անհարմարություն զգան... Ինչո՞ւ են մոռանում, որ մենք պատերազմ ենք տեսել, որ մենք դեռ պատերազմի մեջ ենք եւ նման ամեն մի գիշերային հրավառության ժամանակ քնած մարդուն թվում է, թե քաղաքը ռմբակոծում են:

ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ

18-ամյա աղջկան բռնաբարելու փորձի մեջ մեղադրվող բժիշկը չի ընդունում մեղադրանքը

Մեր տեղեկություններով, 18-ամյա աղջկա բռնաբարության փորձի մեջ մեղադրվող Կապանի բժշկական կենտրոնի անեսթեզիոլոգ-ռեւմատոլոգ Անուշավան Կարապետյանն առաջադրված մեղադրանքը չի ընդունում:

Նույն այդ տեղեկություններով, նա դեպքն այլ կերպ է ներկայացրել իրավապահներին: Այսպիսով՝ իր ցուցմունքում բժիշկը հայտնել է, որ աղջիկը հուզված է եղել, նա էլ գրկել է, որ հանգստանա: Նույն տեղեկություններով, աղջկա հայտնած ցուցմունքը, որ կծել է բժշկի ձեռքերը, հաստատվել է նաեւ դատաբժշկական փորձաքննությամբ. նրա ձեռքերի վնասվածքները դեռ պահպանվել են:

Նշենք, որ այս դեպքի վերաբերյալ «Կապան» ԲԿ-ի արդեն նախկին տնօրեն Սմբատ Օրբելյանը armtimes.com-ի թղթակից հետ զրույցում ասել էր, որ աղջիկը հայտարարել է, որ իրեն բռնաբարել են, իսկ ինքն ինքնասպանության համար դեղ է խմել, բժիշկ Կարապետյանը փորձել է բուժել. *«բայց ոնց տեսնում եք, պարզվել է, որ ինքն էլ է փորձել բռնաբարել»,* – ասել էր Օրբելյանը:

Մեղադրանքը հաստատվելու դեպքում բժիշկ Անուշավան Կարապետյանին սպառնում է ազատազրկում չորսից տասը տարի ժամկետով:

31/01/2017, armtimes.com

Ծնունդդ շնորհավոր, սիրելի՛ հայրիկ

Փետրվարի 13-ին լրանում է Գորիսի տարածաշրջանում եւ մասնավորապես Տեղ համայնքում հանրաճանաչ ու վաստակաշատ մի անձնավորության՝ Սուրիկ Արտավազդի Էլյազյանի ծննդյան 60-ամյակը:

Ծնվել է 1957թ. Գորիսի շրջանի Տեղ գյուղում, որտեղ էլ 1974 թվականին ավարտել է միջնակարգ դպրոցը:

1975-1977թթ. ծառայել է խորհրդային բանակում, ապա սովորել եւ ավարտել Երեւանի Ալեքսանդր Թամանյանի անվան շինարարական տեխնիկումը, աշխատանքի անցել Տեղի թիվ 2 միջնակարգ դպրոցում՝ զինղեկ:

1981-1984թթ. աշխատել է Տեղի պետական տնտեսության շինարարական բրիգադի բրիգադավար:

1984թ. ընտրվել է Տեղի գյուղական խորհրդի գործկոմի նախագահ:

1993-1997 թվականներին Տեղի մշակույթի տան տնօրենն էր:

1991-92 թվականներին՝ Արցախյան պատերազմի տարիներին, լինելով գյուղական խորհրդի գործկոմի նախագահ, ակտիվ գործունեություն է ծավալել՝ թիկունքից սատարելով ազատամարտի ելած զինվորներին ու ինքնապաշտպանական ջոկատներին:

1998 թվականից մինչեւ այսօր աշխատում է «Հայփոստ» ՓԲԸ-ի Տեղի բաժանմունքի վարիչ:

Աշխատելով տարբեր բնագավառներում՝ նա ցուցաբերել է կազմակերպական ու աշխատանքային դրվատելի հմտություններ եւ մարդկային վեհ հատկանիշներ:

Սիրով շնորհավորում ենք Սուրիկ Էլյազյանին՝ հոբելյանի կապակցությամբ:

Քեզ՝ առողջություն, երջանկություն, անամպ երկինք, կանաչ ճանապարհ, սեր ու բարիք:

Ժպտա՛, քանզի մենք քեզ հետ ենք, ժպտա՛, որովհետեւ ժպիտը թելադրում է կյանքի ընթացքը:

Ուզում ենք, որ աչքերդ փայլեն միշտ, ինչպես փայլում են այսօր ու հենց հիմա՝ այս տողերը կարդալիս:

Սուրիկ Էլյազյանի զավակներ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ Բարձր մակարդակով բուժօգնության, զինծառայողների եւ առհասարակ շարքային քաղաքացիների հանդեպ ցուցաբերած հոգատար վերաբերմունքի համար երախտագիտությունս եմ հայտնում Զանգեզուրի կայազորային հոսպիտալի թերապեւտիկ բաժանմունքի վարիչ, մայոր Սալվադոր Սեթոյանին, ով իսկապես Հիպոկրատի երդմանը հավատարիմ բժիշկներից է:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔՐԻՍՏԱՓՈՐՅԱՆ, Սալվարդի հիմնական դպրոց

«Այունյաց երկիր»-ը բոլորի թերթն է. խմբագրակազմը հավատարիմ կմնա տարիներով ձեւավորված իր սկզբունքին

ՀՀ Ազգային ժողովի առաջիկա՝ ապրիլի 2-ին կայանալիք ընտրությունների քարոզարշավի ընթացքում, ինչպես նախորդ բոլոր ընտրությունների եւ տեղական ու համապետական քաղաքական միջոցառումների ժամանակ, «Այունյաց երկիրը» պատրաստ է հավասար հիմունքներով իր էջերը տրամադրել ընտրությանը մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին, ինչպես եւ նրանց կողմից առաջադրված պատգամավորության թեկնածուներին:

Գովազդային նյութերը կարող է պատրաստել կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կամ առաջադրված թեկնածուի նախընտրական շտաբը եւ տրամադրել խմբագրությանը:

Խմբագրությունը կարող է գովազդային նյութերի պատրաստումը, ըստ կուսակցության (կուսակցությունների դաշինքի), առաջադրված թեկնածուի նախընտրական շտաբի առաջարկած տարբերակի ու ծրագրի, իրականացնել իր ուժերով:

Նախընտրական քարոզչությունը կիրականացվի ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցով սահմանված ժամկետում:

Նախընտրական (քաղաքական) գովազդի հետ կապված հարցերով կարող եք դիմել թերթի խմբագրություն:

«Այունյաց երկիր»

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ Երախտագիտություն եմ հայտնում բոլոր նրանց, ովքեր բարեմաղթանքի եւ շնորհավորանքի անկեղծ խոսք են հղել իմ 60-ամյակի կապակցությամբ:

Վահրամ Օրբելյան

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ «Գարեգին Նժդեհ» քիք-բոքսինգի ակումբի մարզիկներն ու նրանց ծնողները շնորհակալություն են հայտնում Այունիքի մարզպետ Վահե Հակոբյանին՝ հաղթող մարզիկներին խրախուսական նվերներ հանձնելու կապակցությամբ: Միեւնույն ժամանակ նրանք ակնկալում են, որ մարզիկներին կաջակցեն հետագայում նույնպես տարբեր միջազգային մրցումների մասնակցելու համար: Նրանք շնորհավորում են նաեւ ակումբի մարզիչ Արայիկ Սարգսյանին ծննդյան օրվա առթիվ, մաղթում առողջություն եւ հաջողություններ:

ՅԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ Մեր եղիազարյանը ափսոսանք է հայտնում Սերգեյ Խաչատրյանի մահվան կապակցությամբ եւ ցավակցում նրա հարազատներին ու մերձավորներին:

ՅԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ Վարդգես Խանոյանը (Ջերմուկ քաղաքից) ցավակցում է Գագիկ Խաչատրյանին՝ հոր՝ Սերգեյ Խաչատրյանի մահվան կապակցությամբ:

ՅԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ «Այունյաց երկիր» թերթի խմբագրակազմը ցավակցում է Գագիկ Խաչատրյանին՝ սիրելի հայրիկի՝ Սերգեյ Խաչատրյանի մահվան առիթով:

Ցուցահանդես՝ նվիրված գեղանկարիչ Ռոբերտ Կամոյանի 80-ամյակին

էջ 9

կենդանության եւ ողջության օրոք հարգել ու պատվել մեր մեծերին, ապրեցնել նրանց, որով կմնան մեզանում եւ դարեդար կպահեն հայ ժառանգությունն անաղարտ, մաքուր ու սուրբ:

Ցուցահանդեսի բացման պատիվը տրվեց Ռոբերտ Կամոյանի որդիներին՝ Դավիթ եւ Լեւոն Կամոյաններին, որից հետո Կապանի արվեստասեր հասարակությունը հնարավորություն ունեցավ հաղորդակից լինելու նրա ժառանգությանը: Ուրախության, ինչ-որ առումով ցավի, հպարտության զգացումներն էին միախառնվել դահլիճում. բացի կտավներից՝ ներկաները նաեւ հնարավորություն ունեին տեսնել Կամոյանին լուսանկարների միջոցով:

Հունվարի 28-ին ցուցահանդեսի փակման արարողության ժամանակ տեղեկացրին, որ Ռոբերտ Կամոյանի ծննդյան 80-ամյակին նվիրված ցուցահանդեսի ժամկետը երկարաձգվում է եւս մեկ շաբաթով:

Միջոցառման ներկաները կիսվեցին իրենց տպավորություններով՝ եւս մեկ անգամ վայելելով Ռոբերտ Կամոյանի ներկայությունը՝ գեղանկարների տեսքով: Մասնավորապես Կապանի տարածաշրջանի հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Հեբոյանը նշեց, որ թեպետ անձամբ չի ճանաչել Ռ.Կամոյանին, բայց նրա աշխատանքների միջոցով ծանոթացավ այս ինքնատիպ գեղանկարչի ներաշխարհին, նրա միստիկ մտածելակերպին, սյունեցու վառ կերպարին, ով ապրում էր հայրենի երկրի հոգսերով:

Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի օգնական Անի Գրիգորյանը շնորհակալություն հայտնեց կազմակերպիչներին գեղեցիկ միջոցառման համար: Նա նշեց, որ Ռ.Կամոյանի ներկայությունն այս սրահում ապահովում են նրա գործերը, որոնց միջոցով բացահայտվում է գեղանկարչի ողջ ինտելեկտուալ աշխարհը: Ա.Գրիգորյանը հավաստիացրեց, որ այսուհետ եւս նմանատիպ միջոցառումների կազմակերպմանը մարզպետարանը կաջակցի:

Մարզպետարանի մշակույթի եւ սպորտի բաժնի պետ Սարգիս Դավթյանի խոսքով՝ ցուցահանդեսը գեղագիտական հաճույք պատճառեց բոլորին, հատկապես հաճելի էր երեխաների այցը, ովքեր հնարավորություն ունեցան տեսնել, զգալ նրա արվեստը, կրթվել Ռ.Կամոյանի թողած հսկայական ժառանգությամբ: Նա ցանկություն հայտնեց, որ Կամոյանի գործերը ցուցադրվեն նաեւ արտերկրում, եւ մարզում առավել հաճախակի դառնա նշանավոր գեղանկարիչների ցուցահանդեսների կազմակերպումը:

«Կապան մոլ» առեւտրի կենտրոնի տնօրեն Դավիթ Սարգսյանը նշեց, որ հաճելի է իրենց հարկի տակ նման ցուցահանդեսի կազմակերպումը, եւ այսուհետ եւս նրանք հնարավորության սահմաններում կաջակցեն գեղագիտական միջոցառումների անցկացմանը:

Վերջում Սուսաննա Մարտիրոսյանը շնորհակալություն հայտնեց բոլոր այն մարդկանց, ովքեր այս ողջ ժամանակահատվածում աջակցեցին ցուցահանդեսի կազմակերպիչներին:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Այունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47**:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ»
բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 3 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1730, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 03.02.2017թ.:

Սպարտակ Հակոբյանը 60 տարեկան է

ԳԱԳԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Սյունիքի մարզպետարանի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետ

Ասում են՝ մարդուն ճիշտ բնութագրելու համար անհրաժեշտ է տարիների մտերմիկ շփում, ջերմ հարաբերություններ, ընդհանուր հետաքրքրություններ եւ այլն: Թեեւ Սպարտակ Հակոբյանի հետ անձնական մտերմիկ հարաբերություններ չունենք, բայց նրա գործունեությունը, անցած ճանապարհը թույլ են տալիս բնութագրել նրան՝ խելացի, ճկուն միտք ունեցող, հեռատես անձնավորություն: Հատկանիշներ, որոնք անհրաժեշտ են գործարար աշխարհում հաջողության հասնելու համար:

Սյունյաց աշխարհի գործարար մարդկանց շրջապատում նա համառ ջանքերով կարողացել է ուրույն տեղ ու դիրք զբաղեցնել՝ նպաստելով մարզի հացարտադրության զարգացմանը, լուծելով շատ գյուղացիների հացահատիկի վերամշակման, իրացման հարցերը: Չափազանց կարեւոր է ապրանքի որակը բարձր պահել, իսկ Սպարտակ Հակոբյանի հիմնադրած ընկերությունը մինչ օրս եւ, համոզված եմ, հետագայում, տարածաշրջանում կկարողանա պահել իր առավելությունը, որն արդեն ավանդույթի ուժ է ստացել: Նա ոչ միայն հացահատիկ վերամշակող է, այլեւ արտադրող, ով իր մասնագիտական գիտելիքներով ու կարողություններով լավագույն օրինակ է հող մշակողների համար: Պետք է նշեմ, որ նաեւ նրա ղեկավարած ձեռնարկության շնորհիվ է, որ հացի գնագոյացման գործընթացը մարզում վերահսկելի է: Նա, հաշվի առնելով բնակչության սոցիալական վիճակը, մշտապես կարողանում է կայուն պահել հացի գինը՝ թույլ չտալով անհարկի թանկացումներ:

Շնորհավորելով ծննդյան 60-ամյակի կապակցությամբ՝ մաղթում եմ Սպարտակ Հակոբյանին ամուր առողջություն, ամենայն բարիք, իր բնագավառում նպատակասլաց գործունեություն: Թող նրա նման անհատի եւ գործարար մարդու համբավը շատ-շատերի համար օրինակ ծառայի: ■

ԿԱՐԵՆ ԼԱԶԱՐՅԱՆ

Գորիսի պետական քոլեջի տնօրեն, Գորիս համայնքի ավագանու անդամ

Գորիս քաղաքում եւ հարակից տարածաշրջանում կան անուններ, դեմքեր, առանց որոնց հնարավոր չէ լիարժեք վերհիշել մեր երկրամասի երեկվա օրը եւ պատկերացնել (հատկապես գյուղատնտեսության ոլորտում) ներկայիս բնականոն ընթացքը: Նրանցից մեկը Սպարտակ Հակոբյանն է, ով նաեւ, համոզված եմ, վաղվա օրը լցնող, իմաստավորող անուն է մեզանում:

Վաղուց ցանկություն ունեի հրապարակորեն խոսք ասել նրա մասին եւ առիթ էի փնտրում: Եվ ահա պատեհ առիթը կա՝ Սպարտակ Հակոբյանը 60 տարեկան է…

Անշուշտ, ինքը մեր քարափների նվիրյալներից է, շիտակ կեցվածք ունի, աշխատող, արարող, տնտեսության բաբախյունը զգացող, սեփական ուժերին ապավինած անձնավորություն է:

Անշուշտ, ընկածին, կարիքավորին ձեռք մեկնող, համաքաղաքացիների հոգսով ապրող եւ այդ ամենը չցուցադրող, չշահարկող անհատականություն է:

Այն գորիսեցիներից է, ով Արցախյան պատերազմի օրերին ոչ միայն խրամատ գնաց, այլեւ պատասխանատվություն ստանձնեց փորձությունների մեջ հայտնված, կրակագծի վերածված հայրենի գյուղի՝ Կորնիձորի լինելիության համար: Բայց նրա վաստակը, նրա կերպարը կուզենայի իմաստավորել այլ տեսակետից:

Երբեք չհայտնվեց հասարակության բեւեռներից որեւէ մեկում: Նրա համար, որքանով նկատել եմ, բոլորը «մենք» ենք, բոլորը «մերոնքական» են, մերժելի են հանրության մեջ (հատկապես համայնքում, տարածաշրջանում) բաժանարար գծերը: Նա, կարելի է ասել, բոլորի հետ է, եւ բոլորն էլ նրա հետ են:

Այդպես սովորաբար լինում են մարդիկ, ովքեր իրենց հոգով, ապրած կյանքով ե՛ւ տեր են, ե՛ւ մշակ հայրենի բնօրրանում:

Ու շատ բնական է եւ օրինաչափ, որ նրա ներկայությամբ ոչ ոք (անգամ մեր օրերի շփոթահար մարդը) իրեն հայրենիքից, ժամանակաշրջանից, երկրի ընթացքից վտարված, դուրս մղված չի զգում:

Տեղյակ եմ հայրենի ոստանի՝ Կորնիձորի հանդեպ նրա՝ իրոք որ որդիական վերաբերմունքին: Դա, իսկապես, ընդօրինակման արժանի վարքագիծ է: Դա իր ակունք-արմատի, իր նախնիների հիշատակի հանդեպ հարգանքի, երախտագիտության դրսեւորում չէ սոսկ: Դա այն իրողության, մտածողության, ճշմարտության հստակ արտահայտությունն է, որ մեր լեռնաշխարհը կարող է հզոր լինել եւ հուսալի ապագա ունենալ միայն կենսունակ գյուղերով:

Դրվատելի է երիտասարդության, ուսանողության հանդեպ նրա վերաբերմունքը, ինչն իր իրականության անբաժանելի բաղադրիչն է: Չէ, ինքը համախոհներ չի փնտրում նրանց մեջ, ինքն իր տեսակն ու պատկերացումները չի պարտադրում նրանց: Ինքը պարզապես կարողանում է տեսնել առաջադեմ, խոստումնալից, կարող երիտասարդներին՝ նրանց սատարելով հնարավորության սահմաններում:

Այդպիսի մարդիկ, խոստովանեմ, իրենց տեսակով ու պահվածքով շրջապատին ողողում են ուրախությամբ, հպարտությամբ, ողջամտությամբ:

Հարգելի պարոն Հակոբյան

Ընդունեք մեր շնորհավորանքը հոբելյանիդ կապակցությամբ:

Ձեզ՝ առողջ եւ արեւշատ օրեր, մեր հրաշալի Գորիսը հնարավորինս շենացնելու արդյունավետ գործունեություն: ■

ԳՐԻՇԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գորիսի պետական համալսարանի դասախոս, Գորիսի տարածաշրջանի համայնքների միության նախագահ

Ընկերոջ մասին խոսք ասելը դժվար է: Խոսում ես մի մարդու մասին, որի հետ տասնամյակներ շարունակ ճանապարհ ես անցել, հաց կիսել, դժվարություններ հաղթահարել: Հետո մի փոքր ամփոփելու դեպքում, ներքին գոհունակություն ես ապրում, որ ընկերությունդ քննություն է բռնել կյանքի հորձանքների մեջ, որ այն պահպանել է իր բովանդակությունն ու էությունը:

Հեշտ ճանապարհ չի անցել ընկերս: Լուրջ դժվարությունների միջով է անցել: Կյանքի մի հատվածում ճակատագիրը բուռ հարված հասցրեց, բայց նա չկորցրեց ինքնատիրապետումը, կյանքը նորից սկսելու անկոտրում կամքը: Եվ կարողացավ իր ինտելեկտի, բնատուր կազմակերպչական հատկանիշների շնորհիվ նորից շտկել իր ճանապարհը, նորից ուղիղ նայել իրականությանն ու շարժվել առաջ:

Ապրելով մի որոշակի միջավայրում, մենք հաճախ չենք նկատում մեզ հետ նույն միջավայրում ապրող, որոշակի առանձնաշնորհներով օժտված մարդկանց, ովքեր իրենց գործունեությամբ որոշակի ռիթմ են հաղորդում տվյալ միջավայրին: Մանավանդ, որ նման մարդիկ, սովորաբար, առանձնանում են հենց իրենց զսպվածությամբ ու համեստությամբ: Հենց նման մարդկանցից է Սպարտակ Հակոբյանը: Նա իր կազմակերպական ընդունակությունների շնորհիվ կարողացավ կայացնել իր կողմից ղեկավարվող ձեռնարկությունը, որն արդեն 20 տարուց ավելի գործում է Գորիսում՝ կերտելով իր վիճակագրությունը: Կարողացավ գտնել ժամանակի զարկերակը եւ արդի պահանջներին համապատասխան ուղղորդել ընկերության զարգացումը, որը նշանակում էր նաեւ մեզ համար ռազմավարական նշանակություն ունեցող աշխատատեղերի ստեղծում եւ ընդլայնում: Իսկ այդ ամենը միայն իր համար չէր ու չէ: Նա ապրում է հարազատների, ընկերների ու հասարակության հոգսերով, պատրաստակամ օգնում եւ շարունակելու է օգնել մարդկանց, քանզի այդ հատկանիշները ներդաշնակված են նրա մարդկային էությանն ու նկարագրին:

Շնորհավոր ծնունդդ, ընկեր…

Առողջ եղիր: Լավ է, որ դու կաս: Որքան էլ փորձենք երեւակայել, թե դեռ ջահել ենք, միեւնույն է, արդեն պատկառելի անցյալ ունենք, որի հետ պարտավոր ենք հաշվի նստել:

Ծերանում ենք, եղբայր, ծերանում ենք… ■

ԱՐԿԱԴԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տեղ համայնքի ղեկավարի տեղակալ

Սպարտակ Հակոբյանին ճանաչում եմ դպրոցական տարիներից: Լինելով միեւնույն համայնքի բնակիչ, միասին աշխատել ենք Կիրովի անվան կոլտնտեսությունում՝ Սպարտակ Հակոբյանը՝ գլխավոր զոոտեխնիկ, ես՝ գլխավոր տնտեսագետ: Արցախյան գոյամարտի տարիներին միասին մասնակցել ենք գյուղի պաշտպանությանը: Պատերազմից հետո նա տեղափոխվել է Գորիս, որտեղից էլ սկսել է ձեռնարկատիրական ակտիվ գործունեություն ծավալել:

Որպես մարդ բացառիկ անձնավորություն է՝ օժտված լավագույն հատկանիշներով, որպես ձեռնարկատեր՝ խիստ ճշտապահ եւ կարգապահ, որպես ընկեր՝ ազնվագույն: Նա ոչ միայն բարեկամ է, ընկեր, այլեւ Կորնիձոր համայնքի յուրաքանչյուր բնակչի հույսն ու հավատը, ով գյուղացու հոգսերին ամենաարագ արձագանքողն է, աջակցողը: Մարդկային բարձր հատկանիշների շնորհիվ է, որ նրան շրջապատում են թե՛ գեներալ, թե՛ շարքային զինվոր, թե՛ ֆերմեր, թե՛ հովիվ, թե՛ մեծահարուստ, թե՛ աղքատ…

Հիմնելով «Հայկ-Ժոս» ընկերությունը՝ լուծում է տարածաշրջանի ցորեն արտադրողների համար կարեւորագույն՝ իրացման հարցը եւ ոչ միայն՝ գյուղացուն ապահովում է նաեւ բարձրորակ սերմացուով, պարարտանյութով:

Այսօր հաճախ ենք զանգվածային լրատվամիջոցներում հանդիպում այն խոսքը, թե մեծահարուստների զավակները չեն ծառայում հայոց բանակում: Բայց այս խոսքերը Սպարտակ Հակոբյանի փոքր որդու մասին չեն, ով այսօր պաշտպանում է հայոց սահմանները:

Հայրենասեր, արդարամիտ, կարգապահ, բարի, իմաստուն… այս բառերի շարքը կարելի է անվերջ շարունակել Սպարտակ Հակոբյանին բնութագրելու համար, բայց ես համառոտ կասեմ՝ մեծատառով մարդ, ով ոչ միայն օգտվում է մեր երկրի բարիքներից, այլեւ ստեղծում է դրանք:

60-ամյակը մի տարիք է, երբ պետք է հետադարձ հայացք ձգել, արած-չարածը վերլուծել, հավաքել ստեղծածի պտուղները: Իսկ Սպարտակ Հակոբյանն իր ողջ կյանքի ընթացքում միայն ստեղծել է, ոչ մեկին չի վնասել իր գործունեությամբ, ավելին ասեմ՝ Կորնիձոր համայնքի պատմության մեջ նրա անունը ոսկե տառերով կգրվի:

Շնորհավորելով հոբելյանի կապակցությամբ՝ իմ եւ կորնիձորցիների անունից մաղթում եմ նրան առողջություն, հաջողություններ, երջանկություն: Տա՛ Աստված, որ նրան միշտ առողջ եւ երջանիկ տեսնենք: ■

ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՍՏՅԱՆ

Կենտրոնական բանկի գործերի կառավարչի տեղակալ

Սիրելի՛ Սպարտակ, սիրելի՛ ընկեր

Փորձում եմ հասկանալ, թե ինչ է զգում մարդ իր 60-ամյա հոբելյանի օրը: Դա ապրած օրերի, տարիների հանրագումար է, որն արդյունքում ներկայանում է որպես ապրած կյանք: Եվ լավ է, որ հետ նայելիս զղջալու քիչ բան ունենաս:

Մենք կյանքով ու ճակատագրով կապված ենք միմյանց: Մենք, նույնիսկ ծիծաղելի է հիշել, ընկերություն ենք արել դեռեւս մանկապարտեզից. հետո երկար ու ձիգ դպրոցական տարիներ՝ հազար ու մի արկածներով ու պատմություններով:

Ծնողներիդ վաղաժամ կորստից հետո ճակատագիրը մի անգամ էլ հարվածեց քեզ. Կորնիձորում Ղարաբաղյան պատերազմի առաջին զոհերից մեկը եղավ քո կինը: Սակայն դու քո մեջ ուժ գտար կազմելու նոր օրինակելի ընտանիք՝ սրբորեն պահպանելով նախկին ընտանիքիդ նկատմամբ պարտավորությունները:

Ունենալով այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են նպատակասլացությունը, բծախնդրությունը, կարգապահությունը, պահանջկոտությունն ինքդ քո, ապա եւ շրջապատիդ հանդեպ, դարձար այն, ինչ այսօր կաս՝ հայրենի գյուղի՝ սահմանամերձ Կորնիձորի մարդկանց հոգսերով ապրող ու նրանց թիկունքին ամուր կանգնած մարդ:

Կյանքի բերումով եւ մեր հոգսերով տարված պատահում է, որ ինչ-որ ժամանակ չենք հանդիպում իրար, բայց մանկական եւ պատանեկան հիշողությունները երբեք չեն թողնում, որ մենք հեռանանք իրարից:

Սիրելի՛ ընկեր, հարազատս…

Ընդունիր իմ ջերմ շնորհավորանքն ու լավագույն մաղթանքները: Թող մարդկային ջերմ հարաբերությունները լուսավորեն քո ճանապարհը, լավն ու բարին միշտ լինեն ուղեկիցդ:

Քաջառողջություն եմ մաղթում քեզ եւ երկար տարիների կյանք:

Համոզված եմ, որ, Աստծո կամքով, մենք, ինչպես մեր մանկությունն ու պատանեկությունն ենք անցկացրել միասին, այդպես էլ ծերության օրերին կլինենք միասին հայրենի գյուղում: Դա իմ ամենանվիրական եւ գողտրիկ ցանկություններից է: ■

ՌՈԲԵՐՏ ԷԶԱՆԱՆՑԻ

Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի՝ Հաբանդա հինավուրց գյուղերից է: Գտնվում է Արաքսի ձախակողմյան վտակ Հագարի գետի ավազանի Կորնիձոր գետակի ձախ զառիթափ լանջին ու դրանից վերեւ՝ սարավանդի վրա, ծովի մակարդակից 1125-1190 մետր բարձրությամբ: Գլոբուսի վրա համաշխարհային տեղացույցերն են՝ արեւելյան երկայնության 46 աստ. 31 րոպ. 52 վրկ. եւ հյուսիսային լայնության 39 աստ. 32 րոպ. 53 վրկ.:

Ունի քարանձավային տների թաղ եւ դրա արդիական գեղեցկատես հակակշիռը՝ շախմատաձեւ-ինքնատիպ հատակագծով: Գյուղանունը տարբեր պատմական աղբյուրներում տարընթերցվածներ ունի՝ Կորնիձոր, Կոռնիձոր, Կերենզուր, Գերնիձոր, Կռնաձոր եւ այլն: Կորնիձոր անվանումն ավանդաբար կապում են տեղացիների՝ իշխողների մոտ կատարած կոռային աշխատանքի ծավալի հետ:

Գյուղի Սուրբ Հովհաննես եկեղեցին վերակառուցված է 18-րդ դարում: Գյուղի մերձակայքում կան հնավանդ, տարանուն գյուղատեղիներ, որոնցից հիշարժանը Խորեա կամ Խորյա (Սռի եղցի) հնավայրն է: Բանասիրության մեջ կարծիք է եղել (Ստ. Օրբելյանից առ Ստ. Մալխասյան…), որ Պատմահայր Մովսես Խորենացին ոչ թե Տարոն Խորոնքից էր, այլ՝ Հաբանդա Խորյանից: Ս.Խանզադյանը տեղացի տարեցներից գրառել է Պատմահոր՝ Սռի եղցու հետ առնչված լինելու որոշ պատումներ:

Կորնիձորն Արցախի ազատագրական պատերազմի ժամանակաշրջանում հայտնի էր սխրանքներ գործած ինքնապաշտպանական ջոկատով, որն իր բացառիկ կազմակերպվածությամբ համալրեց նորանկախ ՀՀ զինված ուժերը:

Սյունիքի՝ մեր ժամանակների բարեշեն ու առինքնող, հեռանկար ունեցող գյուղերից է՝ միջնակարգ դպրոցով, մանկապարտեզով…

8.12.2015

Êáëù ×³Ý³å³ñÑÇ

«Ապրել այնպես, որ հայրենի հողը երբեք չզգա քո ծանրությունը».

սա Սպարտակ Հակոբյանի սկզբունք-նշանաբանն է

էջ 2 դրամի չափով օգնություն: Իսկ օգնությունն այդ տարբեր դրսեւորումներ ուներ...

– Ես չեմ կարող բանակի մասին խոսել ու նայել դիմացինիս աչքերին, եթե որդիս չծառայի բանակում: Ստացած դաստիարակության շնորհիվ Հայկ որդիս հայոց բանակի արժանավոր զինվորներից է:

Բոլոր ժամանակներում էլ Սպարտակին լավ պաշտոններ են առաջարկել, սակայն մնացել է իր համոզմունքին՝ այս աշխարհում ամեն ինչ անցողիկ է, հատկապես պաշտոնը, իսկ տնտեսությունն ուրիշ է, այն երկրի զարկերակն է: Նա իրեն գյուղատնտեսության ոլորտում լավ է զգում, դա նրա տարերքն է: Եվ այդ տարերքից հյուսվում է նրա կենսագրությունը, կենսագրություն, որ նրա երեք երեխայի՝ Սյուզիի, Դանիելի, Հայկի համար դաս-դասագիրք է, ու նրանք միշտ բարին ու լավը կցանեն:

«Հայկ-Ժոս» ՍՊ ընկերությունը կշիռ ունի Գորիսում ու տարածաշրջանի գյուղերում:

– Փորձում ենք ձեռնարկության շնորհիվ հավասարակշռված պահել հացի գնագոյացման գործընթացը, – ասում է Սպարտակը, *– շատ մարդիկ սոցիալապես ծանր վիճակում են, այնպես ենք անում, որ հացը մատչելի լինի նրանց, որ հացի գները թռիչք չգործեն: Գյուղատնտեսությունը երկրի համար ռազմավարական նշանակություն ունի: Նրա զարգացման համար անընդհատ պետք է նորանոր պայմաններ ստեղծել: Մենք ապրում ենք այնպիսի տարածաշրջանում, ուր ոչ մի բան ապահովագրված չէ, յուրաքանչյուր պահ կարող են անցանկալի անակնկալներ լինել: Դրա համար մենք պետք է պատրաստ լինենք ժամանակի մարտահրավերներին, ունենանք այսպես կոչված «բ» պլան, ու գյուղատնտեսությունն այնպես զարգացնենք, որ ժամանակի մարտահրավերները մեր կողքով անցնեն ու ցավ չպատճառեն: Դրա համար էլ պիտի թեւ-թիկունք լինենք գյուղացուն:*

Իսկ գյուղացին նրա համար նաեւ կորնիձորցին է, ում Արցախյան պատերազմի օրերին սատարել է նաեւ խրամատից՝ օգնության ձեռք մեկնելով պատերազմի օրերին ժամանակավորապես Վերիշենում ու Նորավանում ապաստանածներին: Ձեռք է մեկնել, որ Կորնիձորը միշտ նրանց համար ջերմ օջախ լինի, հայրական տուն ու ծննդավայր, որ լինի մեծ սիրո տուն:

Ժամանակները գալիս ու գնում են: Մարդիկ՝ նույնպես, պաշտոնները՝ եւս: Մնայունը միայն մարդու համբավն է, անունը: «Ապրել այնպես, որ հողը երբեք չզգա քո ծանրությունը». Սեւակի այս խոսքը դարձել է Սպարտակ Հակոբյանի սկզբունք-նշանաբանը: Ու հայրենի հողի վրա նա քայլում է բաց ճակատ, վաստակած մարդու ինքնաբավությամբ, եւ 2016թ. սեպտեմբերի 21-ին՝ հայոց անկախ պետության հռչակման 25-րդ տարեդարձի առթիվ ստացած «Երախտագիտության» մեդալն այդ ամենի գնահատականն է:

ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Խմբագրության կողմից

Փետրվարի 1-ին լրացավ Սպարտակ Հակոբյանի ծննդյան 60-ամյակը:

Սիրելի Սպարտակ
Հարգելի պարոն Հակոբյան
«Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմը շնորհավորում է Ձեզ՝ հոբելյանի առթիվ, ցանկանում քաջառողջություն, երկար տարիների կյանք, անձնական երջանկություն: Վստահ ենք, որ դեռ շատ տարիներ Ձեզ տեսնելու ենք ստեղծարար աշխատանքի, արարումի ճանապարհին: Իսկ որպես մարդ, որպես ընկեր ու քաղաքացի, համոզված ենք, լինելու եք ընօրինակման արժանի եւ մեր լեռնաշխարհի մարդ արարածին բնորոշ լավագույն որակների կրողը:

Ալվարդ Մեսրոպյանի ակնարկն ընթերցելուց հետո որերորդ անգամ համոզվեցինք, որ մեր հոգեւոր պետի՝ Ակսել Բակունցի այս մի բանաձեւում-մարգարեությունը նույնպես գրված է բոլոր ժամանակների համար. «Աշխարհքս միշտ կմնա, ասա մարդը սեւերես չմնա… »:

Ծնունդդ շնորհավոր: